ห้องสมุดกรมวิชาการ

คำอธิบายเรื่อง
ไม้ดอกไม้ประดับ

ห้องสมุดกรมวิชาการ

ԱՎԵՏԻՔ ԻՍԱՀԱԿՅԱՆ

(Գործ՝ ժողովրդ. նկարիչ Մ. Սարյանի)

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՂԱՆԱԼԱՆՅԱՆ

891.99.092 [Խաչատրյան]
Ղ

Ա 65101

ՄՍՄԻԳՎԱԾ է 1961 թ.

ԻՍԱՀԱԿՅԱՆԻ ԼԻՐԻԿԱՆ

ՀՅԹ

ՀԱՅՊԵՏՀՐԱՏ
ՑԵՐԵՎԱՆ 1940

Ов. Ганаланян

Лирика Иссакяна

Гиз Армянской ССР Ереван, 1940

Поэт Исаакян первоклассный; может быть такого светлого и непосредственного таланта теперь во всей Европе нет.*)

А. БЛОК

Ալեքսիք Իսահակյանը, վորի ստեղծագործական տարերքը հիմնականում լիրիկան է, սերել է 19-րդ դարի արևելահայ քնարական բանաստեղծությունն սկզբնավորող Սմբատ Շահազիզի քնշթողական գաղափարից։ Այդ բանը չի ժխտում և ինքը բանաստեղծը։ Իր ուսուցչին՝ Հովհաննես Հովհաննիսյանին ուղղված մի նամակում (գրված նրա գրական գործունեության յիրեսուն-ամյակի առթիվ) Իսահակյանը շեշտում է այն հանգամանքը, վոր ինքը, գրականության մեջ իր սկզբնական քայլերն անելիս, աչակերտել է Հովհաննիսյանին. «Ես առաջին անգամ խմեցի բանաստեղծության նոր խսկական աղբյուրից, վորովհետև դու ինքդ եյիր վոսկեղեն աղբյուրը, վոր կարկաչում եյիր հայոց հին ու նոր յերգերի սահմանագծում»**), գը-

*) Ա. Բլոկի 1916 թվին գրած նամակից։

**) Տես «Մուզվի ձայն» 1913 թ. № 89

բում և Իսահակյանը։ Իր գրական գործունեության վաղ շրջանում ընթանալով Հովհաննիսյանի բաց արած ճանապարհով և հետևելով նրա գրական լավագույն արդիդիցիներին, Իսահակյանը հետագայում ինքն էլ իր հերթին ստեղծեց յուր գրական դպրոցը և ունեցավ հետևողների մի ամբողջ հույլ, որի ամենատաղանդավոր ներկայացուցիչն եր իր գրական առաջին քայլերն անող Վահան Տերյանը։

Իսահակյանի պոեզիան փթթել և տակավին անցյալ դարի 90-ական թվականների վերջերից սկսած (նրա բանաստեղծությունների առաջին ժողովածուն լույս է տեսել 1898 թվին)։ Մի շրջան եր դա, յերբ Անդրկովկասի ու Հայաստանի հասարակական-քաղաքական և տնտեսական կյանքը հզի յեր հակասություններով։ Արդյունաբերական կապիտալիզմի անդադարը թաց վերելքն ստանում եր ամերիկյան մանրիկ տնտեսությունները՝ գրունավեր թափելով վիճակի մեջ գցելով գյուղացուն։

Տնտեսական կյանքում առաջացած այդ հեղաշրջման հետևանքով ճգնաժամային վիճակ եր ստեղծվել Անդրկովկասի քաղաքներում ապրող մանր արտադրողների և արհեստավորների համար ևս։ Արդյունաբերական կապիտալիզմի ստեղծած խոշոր արտադրության մրցմանը չեին կարող դիմանալ խրղճուկ տնայնագործն ու արհեստավորը։ Դրամական հարատև տագնապի մեջ եյին նաև մեր մտավորակա-

նութիւնն ու գրողների մեծագոյն մասը, վորոնց համար հանապազորեայ դժվար լուծելի հարց եր հացի խնդիրը։ «Աղքատացող շատ, հարստացող քիչ»— այս պես եր բնորոշել Իսահակյանն այդ ժամանակվա տընտեսակարգը։

900-ական թվականներին պատմականորեն հաջորդող հետագա շրջանը 1905 թվից հետո սկսվող ռեակցիայի տարիներն եյին, յերբ մեր առաջավոր մտավորականութեան ակնկալութիւններն այդ հեղափոխութիւնից ի դերև եյին յելնում և հուսախաբութիւնը կատարեալ եր դառնում։ Նույն այդ շրջանում եր, վոր «վոգու սոչ» եր գուշակում Իսահակյանը հայ հղփացած բուրժուազիայի համար, վոր ցարական Ռուսաստանի գործակալների հետ մկացած հալածում, ծաղրում եր մայրենի լեզուն ու մեր առեղծագործ մտքը։*) Ի լրումն այս ամենի, պետք և հիշել նաև 1906, 1918 և 1920 թվերի աղդամիջյան ջարդերն ու ավերվածութիւնները։ Այս ամենն ընդհանուր առմամբ անհանգիստ վիճակ եր ստեղծում մեր հուսաներսա պոետի համար, վոր իր հոգու ականջը սրած՝ անծայր աշխարհի ամեն խորքից լսում եր հանուրի

---

*) Հիշենք 1885 թ. հայկական դպրոցների փակման փաստը ցարական Ռուսիայի գործակալ Դոնդուկով— Կորսակովի կողմից։ Հիշենք 1889 թվականը, յերբ պետական վորոշմամբ արգիլվեց հայոց պատմութիւնի ավանդումը մեր դպրոցներում, իսկ 1896 թ. փակվեցին 168 հայկական դպրոցներ, վորից մի տարի հետո, 1897 թ. վերացվեց նաև մեր դպրոցների ինքնուրոյնութիւնը։

Վողբն ու հեծեծանքը, միշտ և ամենուրեք։
Եվ այդ ամենը,—
կաթիլ ու կաթիլ հավաքվում,
Գալիս, թափվում են
Նրա «վշտոտ», «խոցված» սրտի մեջ...

Հասարակական կյանքի այս հողից «ծնավ-սնավ» Ավետիք Իսահակյանի անհանգիստ բնավորություն ունեցող նյարդոտ պոետիան։

Իսահակյանի յերգերում արտահայտվել և բանաստեղծի դժգոհությունը տիրող կարգերից՝ մերթ ուղղակի բողոքի շեշտով, յերբեմն խեղդված հեկեկանքով։ Այդ յերգերում արձագանք են գտել ճղնաժամային այն նոպաները, վորին յենթակա յեր 90-ական 900-ական և հետագա ժամանակների (ընդհուպ մինչև 1917 թիվը) մեր առաջավոր մտավորականությունը։

Իսահակյանի լիրիքական ստեղծագործությունների առյուծի բաժինը կազմում են սիրո յերգերը։ Դրանք հիմնականում անարձագանք մնացած դժբախտ սիրո ռոմանտիկ յերգեր են, վորոնց տակ սոցիալական խոր իմաստ և թաղնված։

Իր բանաստեղծությունների անդրանիկ ժողովածուի մեջ, վոր լույս է տեսել 1898 թ., Իսահակյանն ինքն էլ շեշտում է իր դիմավորապես սիրերգակ լինելը։ «Առաջաբանի տեղ» գրված մի յերգում, նա-

պարզ ու մեկին հայտարարում է, որ իր քնարի բոլոր մյուս լարերը խզվել, կտրվել են՝ բացառությամբ սիրո լարի.

Մենակ սիրո լարը մնաց
Սրտիս անհուն խորքերում,
Մենակ սիրո յերգը շողաց
Կյանքի ամեն ծալքերում։*)

Իսահակյանը խորապես ապրել է իր յերգած սիրո զգացումը։ Գյոթեյի նման նա կարող է ասել, թե՝ «Սիրային բանաստեղծությունները յես գրել եմ միայն այն ժամանակ, յերբ սիրահարված եյի»**)։ Իսահակյանի սերը յեղել է անարձագանք մնացած և նրա սրտում լայն վերք թաց արած մի դժբախտ սեր։ Ցերիտասարդ պոետի յերգած սերը «զարթունքիս պես բանկված», «վիթի նման աղջկանց» ներ ուղղված։ Անմիջական ու բուռն զգացմունքներից են հոսել պոետի սիրո յերգերը։ Սիրող սրտի հավելվածից է խոսել բանաստեղծը յերբ ասել է,—

Հոգիս հարբած
Քու համբույրներն,
Ցերդս ծփաց
Ինքն իրեն...

---

*) Իր բանաստեղծությունների 1908 թ. և հետագա հրատարակությունների մեջ «Մենակ սիրո յերգը շողաց» տողը բանաստեղծը դարձրել է «Ու վառ սիրո յերգը շողաց»։

**) «Разговоры Гете» 1891 г., собранные Эккерманном.

Սիրո ծարավի բանաստեղծն ամեն տեղ ու ամեն ինչի մեջ իր սիրուհու պատկերն է վորոնում։ Հոգեբանորեն սա շատ բնորոշ հանգամանք է սիրահարված մարդու համար։ Բանաստեղծի միտքը, ինչպես՝ յերևում է այդ նրա սիրո յերգերից, շարունակ հածել է այդ ուղղությամբ։ Շուշիկի պատկերը նա վորոնել է անձկությամբ, վորի հանդեպ տածած իր անհուն սերը ցույց տալու համար բանաստեղծը անթիվ ու անկարելի «կուզես լինեմ»-ների խոստումներ է անում նրան։

Ի՞նչ վոր ցանկաս, կո՞ւզես լինիմ,
Լինիմ յերկինք ու յերկիր,
Լինիմ ծո՛վ, ժա՛յռ, արև՛, լո՛ւսին,
Միա՛յն, միա՛յն ինձ սիրի՛ր...

Բանաստեղծի հոգին վկայել էր, վոր Շուշիկն ուրիշին պիտի պատկանի, և հիրավի այդպես էլ լինում է։ Նա տեսնում է, վոր Շուշան յարը, իր հոգու հատորը, խլվում է իրենից։ Ի՞նչ է մնում այս բոլորից հետո անզեն ու անզոր յերիտասարդ պոետին— վոչ բալ իր կորուստը «լա՛լ, արո՛ւն լալ»։

Խեղդամահ յեղած սերը բանաստեղծին առիթ տվեց ի՛լ ավելի «հոնքուր-հոնքուր» «լաց լացել»։ «Ցարիս տարան, ջանիս տարան» աղեկտուր ճչում է պոետը և նրա այս լացի հետ միախառնվում են «զուլում աշխարհիս», «արունքաներ տերերիս» դեմ ուղղված բողոքի շեշտեր։

Սիրեցի, յաքս տարան.
Ցաքա ոմին ու տարան,—
Ես ի՞նչ զուլում աշխարհ է.
Պոկեցին սիրտս ու տարան։

Պոկելով բանաստեղծի զգայուն սիրող սիրտը՝ բիրտ ճարդիկ պատճառել են նրան ահավոր մի ցավ։ Դա յերևում է պոետի արձակած բարձր ճիչերից։ Ցեթե յերկու խոսքով բնորոշելու լինենք Իսահակյանի յերիտասարդական շրջանի սիրո յերգերի եությունը, պիտի ասենք, որ դա ճերժված, զոհով խլված սիրո, ցավի ու ճորճոքի յերգն է, որ բազմապիսի տարբերակներով և հնչում նրա քնարի բեկ-բեկ լարերից։ Այս յերգերը, որքան էլ Իսահակյանի անձնական անհաջող սիրո ապրումների արդասիք յերևան, այնուհանդերձ դրանց մեջ չի կարելի չտեսնել նաև սոցիալական բողոքի ուժեղ շեշտեր՝ ուղղված զուլում աշխարհի տերերի դեմ, որոնք փողի և իշխանության ուժով խլեցին, նվաճեցին բանաստեղծի սիրածին։ Բուրժուական աշխարհում զամենն բան ծախվում և փողով,*) հետևապես և սերը, նկատում է բանաստեղծը։ Հարուստների, կյանքի այդ բախտավորների դեմ է, որ ատելությամբ և լցված Իսահակյանը։ Դրանք եյին, որ զարկին, տարան պոետի սիրուհուն և այժմ իրենց հաղթանակի հանդեսն են անում.

---

*) Ա. Իսահակյան, «Նրանք դրոշակ ունեն» 1932 թ. Փարիզ, եջ՝ 33։

Այսոր ձեր տուն մեծ խնջույք կա,
Դու կը բուրես վարդի պես.
Զոքս բոլորքդդ հարուստ տղա,
Դու կը փայլես աստղի պես։

Ձեր տան առաջ՝ ձյուն ու գիշեր,
Ա՛խ, յես կանգնել կը դողամ.
Դու դահճի պես ա՛լ ես հազել,—
Ալդդ շողքն ե իմ արյան...

Հարատևում Հովհաննիսյանին, նկատենք այստեղ այն, վոր Իսահակյանի ակնարկած հարուստ տղի ժպիտն ու ուրախությունը ծաղկել են իր (այսինքն Իսահակյանի, Հ. Ղ.) և իր նմանների աղի արցունքից։ Մեկի յերջանկության ծառը բուսել է մյուսի ավերակներից, մեկի հաղած ալ հանդերձը մյուսի արյան շողքն է։ Այդ հուսահատ, ձեռնունայն մնացած վիճակը բանաստեղծորեն այսպես է արտահայտել Իսահակյանը.

Սիրաս, սիրտս թուլ կը զարկե,
Սեր ու յերդեր ել չկան..
Նոր եր ծըլնել,— արև սիրեց,
Արև-աչեր ե՛լ չըկան։

Ցերեկվա բովանդակ աշխարհն այսոր արդեն դատարկ է թվում բանաստեղծին, նրա անհաջող սիրուց առաջացած «վերքին» «սև սպին», «սև ամպի պես» սևացնում է կենսատու արևի դեմքը։ Իսահակյանի

դարդը լալեն սկսում բաղի բլբուլներն ու վաղորդյան ցողը, արցունքի պես թոնե սկսում գալ աշնան պղտոր ամպից։ Ցերկնքից ընկնում են սիրո աստղերը։ Պոետի խնդությամբ արված սիրո զուլմն են վայում բուլերը, կանչում ագռավները և է լրումն այս ամենի, ահա թե ինչ և անդի ունենում բանաստեղծի հուլզերի յերբեմ-նի յեղեմ այդում։

Նման դայլերի խլմբին ամեհի,
Զրմռան գիշերին վոռնում և քամին.
Ցեվ իմ պարտիզում,— մռա՛յլ, ամա՛յլ,
Խեղճ ուռենիներիս ջարդում և քամին։

Ա՜խ, մանկուց լացեց քո սերը, սի՛րտ իմ,
Վոչ վո՛ք չհասկացավ յերազդ աղվոր.
Զո՛ւր մի՛ վորոնիր սիրտ իմ մտերիմ,—
Ծնվել և հոգին հավերժ մենավոր։

Հանի՛ր քո սերը սրբտիցըդ ան։ուշ,—
Այդ խորթ, ապրելն զավակն աշխարհի.—
Զգի՛ր այս դաժա՛ն, մո՛ւթ գիշերին դո՛ւրս՝
ցուրտ քամու բերան... թող յերթա, սառի...

Թո՛ղ լա, հեծեծա սերըս՝ վորբ, անմա՛յր,
Ցեվ քամին լացը նրա թո՛ղ տանի
Ալեկոծ ծովերը, անապատ մի՛ վայր,—
Սակայն մարդկանց մո՛տ... յերբեք չը տանի...

Ինչո՞ւ պոետը յերբեք չի ուզում, վոր իր լաց ու կա-կանը մարդկանց ականջին հասնի, չե՞ վոր մարդիկ

կարող կլինեն ոգնել նրան, գրել վիշտը։ Ամբողջ խնդիրն այն է, որ Իսահակյանի «մարդ» հասկացողությունը չի համընկնում Գորկու ասած ժամանակակից մարդակերպ մարդու հասկացողության հետ (որ մեծատառով է գրվում և հպարտ է հնչում)։ Իսահակյանի ասած մարդը, դայլ, մարդակեր մարդն է՝ «զուլում աշխարհի» մարմնացումն է։ Դա այն մարդն է, որ, ինչպես տեսանք, զոռով խլեց պոետի ձեռքից նրա սիրած յարին, անխնայորեն ջարդեց նրա հույզի պարտեզում սիրո ընձյուղ արձակած նորաբողբոջ ուռիների ճյուղերը։ Ցերբևե մի լավ բան չսպասելով այդ մարդուց, պոետը վորևե հույս չի կապում նրա հետ. «Անիծվես մարդ, որ հույսդ է մարդ» ասում է նա։ Հասկանալի յե արդեն, թե ինչու բանաստեղծը չի ուզում որ իր վիշտը տարվի մարդկանց մեջ և լսելի դառնա նրանց։ Այս կերպ է տիա հասարակական, ընդհանրական դարձած վիշտը Իսահակյանը տեղափոխում ամենական, անհատական ապրումների շրջանակը, սիրային տառապանքների բնագավառը։

***

Իր ստեղծագործության հաջորդ շրջանում, արդեն հասունացած պոետը կամաց-կամաց ռոմանտիկ աչքուց անցնում է ավելի ռեալին։ Այս անգամ նրան սկսում են գերել կնոջ մարմնական թովչանքները։

Հայնեյի նման ռոմանտիկ սեր յերգող, ավելի յերևակայությամբ, քան իրականով ապրող մեր պոետն սկսում է արևելցի բանաստեղծներին մոտենալ։

Հաջորդից կատարած իր մի թարգմանության մեջ Խառհակյանը հայտարարում է.

Հիմիկուց դեն ե՛լ չեմ ապրի
Առանց կին ու գինի...

Եվ կինն ու գինին, աշխարհի այդ վայելքները, կրանում են նրան։ Պոետը յերազում է կանացի շուրթերը.

Շուրթս վառվեց շրթներդից,
Աշխարհս տերն եմ դառել.

Սակայն Խառհակյանի ռեալ սերը շատ կարճ է տևում։ Շուտով նա «մեղքից» յերդվել է անվանում նման վրդով դրած իր տաղերը։ Բանաստեղծը հրաժարվում է կոնկրետ կնոջ մարմնական հաճույքներից յերդվելուց։ «Բանաստեղծի յերազը» վոտանավորի մեջ՝ նա ցույց է տալիս, թե ինչպես յերբեմն տենչալով կոնկրետ կնոջը, իր վսեմ յերազն այդ կերպ ապանվում և նյութ է դառնում, «և վորպես նյութ պարփակվում և պարտվում»*)։ Եվ վորպեսզի նորից հնարավորություն ունենա ռոմանտիկ «յերկինք դնացող» սեր յերգելու՝ Խառհակյանը շտապում է քավել մեղքի յերդումը «ղղջման» մեղեդիներով։

Այս կապակցությամբ բանաստեղծը նկատում է.

---

*) Տես՝ «Աբեղ», 1922 թ. հունվարի 9-ի համարը։

Սերը կորցրի պապշոտ դրկի մեջ.
Ինչ վոր ունեյի,— և վսեմ, անգին,
Վողջը ապառավեց անհուն կրքի մեջ...
Բարձր լեռների արծիվը մեկ-մեկ
Աղահ աղռավից ցածր կթռնի...

Սակայն «բարձունքն յես գիտեմ, կրճախրեմ նորից» ասում է բանաստեղծը ապաշխարողին հատուկ շեշտով։ Վո՞րն է և ո՞ւր է գտնվում Իսահակյանի հոգին սրբագործող այդ բարձունքը,—

Ջինջ ծովակի մեջ կա մի լուռ կղզի,
Մենավոր, անդորր ժայռերեն մի դահ.
Ուր քաղցը և հնչում ղողանջը զանգի,
Ցեվ փարվում մեղսոտ աշխարհի վրա։

Ցեվ լուռ կղզու մեջ կա նվիրական
Հինավուրց քարայր, մի վեհ սրբավայր.
Այնտեղ պիտ գնամ, լա՛մ, քավեմ, վողբամ
Հոգիս մեղավոր և բաղմաչարչար։

Ցե՛վ պիտի ծեծեմ կուրծքս քարերին,
Ցե՛վ պիտի հեծեմ ցնորքս անբիծ,
Ցեվ պիտի գտնեմ սերը յերկնային,
Վոր հոգիս այրե և մաքրե նորից...

Այս կերպ է ապաշխարում պոետն իր գործած «մեղքերը» և ապա փնտռում է՝ յերկնային սերը, վո-

բով արթարդծելու յե իր «ամենավեր և բարձրագոյն» հոգին։

Բանաստեղծին արդարև հաջողվում է զանել յերկնային սերը, վոր հանդես և գալիս բյուրեղ բարձունքի յերապական «Հրաշք աղջկա» կերպարանքով, և վորին սիրվ ու դիշեր կարոտաբաղձ ու թևատարած ոգասում է Բանահակյանը։

Ցե՛վ սիրվ, և գիշեր յես ոգասում եմ,
Թե տհա կրգա կույսը գյուքիական,
Վոր զարթնած հոգով յերգում վեհորեն
Յերաղոս չքնաղ, մարդարեական...

Իր ուշ ու բեղուն աշունքին՝ փիլիսոփայական յերանգավորում տալով «յերկինք գնացող» ռոմանտիկ սիրո զգացմանը, պտեղը հիրավի վեհորեն և յերգում իր այդ «յերաղը չքնաղ մարդարեական»։ Նրան հաջողվում է «յերկնի ճեղուններից բարձրաբերձ» իր հավերժացող սիրո զգացումը փիլիսոփայական անվախճանության հասցնել։

Ուստիսկ, յերբ ժամանակն իր վախճանին հասնի, և արևն էլ մի բուռ մոխիր դառնա, պտեսի սերը վերջանին վախճան չի ունենալու (տե՛ս՝ «Հավերժական սերը»)։ Թվում է թե այլևս ավելին չի կարելի ասել սիրո հավերժացող և գերագույն զգացման մասին, բայց բանաստեղծն ավելի յե առաջ գնում, նրա համոզմամբ «սերը մարդուն պզտիկ ասուված էլ կդարձնե»։ Նկատենք այստեղ, վոր վոչ միայն պատիկ այլ

A 6501
2920

և մեծ ասոլածն էլ մինչև հիմա վոչ մի մեռելի չի փորձել հարություն տալ, իսկ սիրերգակ Իսահակյանի «Ուստա Գարոջ»-ի մեջ մեռելին հարություն է տալիս նրա սիրո առարկան, վորի աչքերից կաթած արտասուքները ծորելով մեռածի վերքի վրա, կենդանացնում են նրան։ Այս բոլորով Իսահակյանը մի բան է ուզում ասել— աշխարհիս յերեսին չկա այլ զորեղ բան, քան սերը։ Այս համոզումը հաղթահարում է մահվան մղձավանջը, վոր ծնվել էր պոետի մեջ իր ստրծունեյության տակավին վաղ շրջանում, և հարմար առիթներին իր տարուն էր զգացնում նրա յերգերում։

Իսահակյանը իր բանաստեղծություններում ապրել ու անցել է սիրո զգացման բոլոր փուլերը։ Տակավին տարիներ առաջ, յերբ յերաշտ յերիտասարդ էր պոետը, վաղ շրջանի Հայնեյի նման յերգեց իր «յերկինք գնացող» ռոմանտիկ սիրո յերգերը։ Այնուհետև, բավական հասակ առնելով, նա հնչեցրեց նաև մարմնական սիրո վայելքների յերգը։ Ժամանականց, Իսահակյանը գրելով իր զղջման մեղեդիները՝ հրաժարվեց «յերիտասարդական շրջանում գործած մեղքերից» և հանդես յեկավ վորպես ապաշխարող։ Սմենից վերջը, տարիք առած, ներհուն դարձած քնարերգակը՝ փիլիսոփայական յերանգավորում տալով սիրո զգացմանը՝ յերգեց «Հրաշք աղջիկ» հայերժական սերը իր համանուն հզացման, այլ և «Լիլիթ» ու «Բանաստեղծի յերազը» գործերի մեջ։ Այս կերպ է Իսահակյանը բոլորում իր սիրո յերգերի վոսկե շղթան։

***

Իսահակյանի սիրո յերգերը, ինչպես տեսանք, ընդհանուր առմամբ մորմոքով առլցուն հղացումներ են, վորովհետև նրա սերը մնացել եր անարձագանք՝ «ձայն բարբառո յանապատի»։ Այդ դրության մեջ նա ավելի քան յերբևե կարիք եր զգում եր ցավին ճար անող, վշտերն ամոքող մի սրտացավ մտերիմի։ Ընկերն այդպիսին չի, «սրտացավ ընկեր չկա»,—ասում է բանաստեղծը։ Ուրիշներն ել անտարբեր են մնում նրա անլսելի տառապանքներին։ Ո՞ւմ դիմել ուրեմն, ո՞վ կարող եր սրտանց ցավակցել իրեն։ Նրա «զարգացած սրտի» վերջին հանդրվանը մոր գիրկն է։ Եվ ահա յերկար թափառած, անհաջող սիրուց «քոլ ու չոլ» ընկած «զարդարդյուն աշուղը», հաստատ քայլերով դիմում է մոր գորովալի գիրկը, համոզված, վոր այնտեղ կգտնի իր հանգիստն ու վերքերի ամոքումը։ Մայրն է, վոր մեղմում է պոետի ծայրահեղ հուսալքությունը։ «Վերջ-յերգ» խորագիրը կրող մի վոտանավորի մեջ բանաստեղծն այսպիսի խոսքերով է դիմում իր մորը.

Մեզը առավ դար ու դուրան,
— Աղիզ մերի՛կ, դուռը բա՛ց,
Քու վորդին եմ, խոցված կուզամ,
Անո՛ւշ մերի՛կ, գիրկդ բա՛ց...

Մենք արդեն խոսում ենք Իսահակյանի մորը Ալվիրած սիրո յերգերի մասին։ Այս բաժնում նրա

կզգացումները զարնանապայր հեղեղի ուժ ունեն։ Բանաստեղծը հիրավի գրել է իր հոգին այդ յերգերում։ Մեր գրականության պատմության մեջ դժվար է գտնել մի այլ ստեղծագործող, վոր այս բաժնում դերազանցի Իսահակյանին։ Ճիշտ է, Թլկատինցին, Ե.գայանը, Տերյանը ամենայն անկեղծությամբ ու հուզականությամբ են յերգել մոր կարոտը, բայց Իսահակյանի... զգիրը ուրիշ գրեն է։ Այն էլ անենք, վոր Իսահակյանը հիշյալ պոետների նման մի անդամ չէ, վոր յերգել է մորը, զեղելով իր հեղեղ զգացմունքները։ Մորը՝ սիրասուն Ալմաստի*) կարոտը իր աչքերի մեջ մշտապես պահած է ունեցել յանաստեղծը։ Նրա այս յերգերի թիվը քանակով էլ կերազանց է, մի հանգամանք, վոր նույնպես ապացուցում է մեր ասածը։

Իր անլուր տառապանքներին պոետը հաղորդակից է դարձնում սոսկ մորը, վորովհետև միայն նրան են հայտնի իր վշտաբոշոր վորդու վերքերը.

Բանաստեղծի զղարդին դարման, յարին մահլամ անողը նրա (մեծատառով գրված) Մայրն է։

Պետք է ասել, վոր մոր և վորդու սերը փոխադարձ է։ Տարիներ շարունակ իր անձը տարադրության մեջ մաշող պոետի համար մայրը, ինչպես ասում են՝ զաչքից հեռացված, սրտից մոռացվածչ

---

*) Իր 1903 թվի բանաստեղծությունների ժողովածուն Իսահակյանը նվիրել է մորը, այսպիսի մակագրությամբ՝ «Անգին մորս՝ Ալմաստ Իսահակյանին նվիրում եմ բանաստեղծությունները»։

նյակ չեր։ Բանաստեղծը քանիցս դիմելով իր և մոր մեջ իրը թե կապ պահող սարից յեկող ենչիուն հավքերին, այսպիսի կարոտագին հարցմունք և անում։—

Սարին կուգաք, ենչիուն հավքե՛ր,
Ա՛խ, իմ մորը տեսել չե՞ք։

Պատասխան չստանալով իրենց չուն չարունակող անտարբեր հավքերից, պոետի սրտի մորմոքը սատկանում և ուժգնանում։

Հավք ու հովիր յեկան կչտիս
Անձին դիպան ու անցան,—
Պապակ-սըրտիս, փարիսաք-սըրտիս
Անխոս դիպան ու անցան*)։

Մայրը ևս իր հեռթին սարին յեկող Վոսկան աղջրանց նման հարցումներ անում, ծանոթ Դարդի ձևից սարերն ընկածը իր բալից լուր առնելու նպատակով։ Հանրահայտ վոսանալորի հուզիչ վախճանը Վոսկան աղջրը տված այս պատասխանն է։

—Տեսա, քուլրի՛կ դարդոտ բալեդ,
Քարին և դրել բարձի տեղ,
Անուշ քընով տաք գընդակին և
Կըրծքում գըրկեր յարի տեղ։

---

*) Այս և հնվեր մայրիկիս խորագրով բանաստեղծությունը 1903-1908-ը և 1930 թ. հրատարակություններում ենթարկվել և վերջ փոփոխման։

Յարի մարմանդ հովն է շոյում
Ճակտի փունջը մարալիդ,
Ծաղիկներն են վրան ոգում,
Աղիկ բալիդ, խեղճ Լալիդ*)...

Մորը նվիրած իր մի այլ յերգի մեջ (գրված 1898 թ.), վոր Իսահակյանի բանաստեղծության պատմության հետ կապված ինքնակենսագրական տարրեր ունի, վերատին յերևան է գալիս դեպի իր սիրասուն ցավակն ունեցած մոր սրտացավանքը։ Հղացման շարժառիթն այս է — բանտից ազատ արձակված և տուն վերադարձած մեր պոետին մայրը պատմում է իր հոգեվիճակը նրա բանտարկության ընթացքում։ Կանաչ գարունքին, յերբ արևվերես են յելած լինում կանաչները, նա պատմում է, թե ինչպես սրտի թառանչով միշտ ասելիս է յեղել «Ախ, կանաչներ, դուք արևերես յելաք, յարաբ բալես յե՞րբ կելնի բանդեն»... այդ հուզիչ պատմության տպավորության տակ Իսահակյանը գրել է իր «Կռունկները» չարանչարանք բանաստեղծությունը, վորի բնաբանն էլ դարձել է մոր հիշյալ խոսքերը*)։ Արևի պես անկաշառ ու անմոռանալի յե մոր սերը, այդ բանը շատ անգամ ցույց է տվել Իսահակյանն իր հղացումներում և հակադրել կնոջ, ընկերոջ վաղանցուկ ու խաբուսիկ սիրո զգացումներին։ Ցերկար

*) Այս բանաստեղծությունը տարբեր հրատարակություններում յենթարկվել է վորոշ փոփոխությունների։

*) Այդ մասին մեզ հայտնեց ինքը՝ Ավետիք Իսահակյանը։

տարբերը ստարությանմեջ յեղած բանաստեղծը, յերբ մի որ վերադառնում է հայրենիք՝ «կյանքի բեռով մեջքը ծռած», հայրենի գյուղի հանդում պատահում է իր վաղեմի ընկերին ու յարին, կարոտով մոտենում է նրանց, և իհարկե վոչ ընկերը և վոչ յարը, ճնայած իր կանխավ արած հիշեցման, չեն ուզում նրան ճանաչել.—

Ախբոր յես շա՞տ փոխվեր եյի...

Դառն հեգնանքով ասում է բանաստեղծը: Բայց յերբ մայրն է տեսնում զարմիր բալին՝ վոչ միայն ճանաչում, այլ և անդուստ կարոտի ճիչ է արձակում ու փարվում վորդու վզին.

«Ա՛խ, բալա՝ ջան, զարմիր բալա՝, եղ դո՞ւն ես...»

Ահա այն անդունդը, վոր սահմանազծում է բանաստեղծը ընկերոջ, կնոջ և Մոր միջև: Այս կապակցությամբ չի կարելի չհիշել Նեկրասովի «Մայրը» խորագիրը կրող վառանավորը, վորտեղ, (թեև համեմատաբար ասկավ հուզականությամբ), նույն տարբերությունն է դրվում ընկերոջ, կնոջ և մոր սիրո մեջ:

Լսելով կռվի արհավիրքների,
Ամեն մի ընկած նոր զոհի մասին,
Ցես չեմ ափսոսում կնոջ, ընկերին,
Ցավ վոչ էլ նույնիսկ իրեն հերոսին...

Կմխիթարվի, ո՛, կինը մի որ,
Ընկերն ընկերին կանի մոահան։
Բայց մի հոգի կա մի տեղ ողավոր
Նա հիշելու յե մինչև գերեզման*)։

Նեկրասովի ասած այդ մի հոգին մայրն է, վոր յերբեք չի մոռանալու իր ընկած վորդուն։

Ինչպես ասինք վերևում, Իսահակյանը մենակ իր մորը չե վոր յերգել է. նրա յերգը նաև հանուր մայրերին է ուղղված։ Վայդ ծովի չափ մեծ սերը՝ գեպի այլ մայրերը՝ բանաստեղծի մեջ սերմանել է իր ծնողը (մայրը), ինչու լցրեր իմ մեջ՝ այս զգացմունքը, հայտարարում է հուման հոգու տեր Իսահակյանը։ Եթե վորպես ապացույց այդ բանի՝ բանաստեղծը բերում է հայրենի գոլախի քուչ թռունիկը դրկին նստած, իր վորդու համար աղոթք մրմնջող՝ մոր այս խոսքերը, վոր լիապես դրսևորում է նրա այդ հումանիզմը.

Կը տեսնեմ ահա,— լուռ յերեկոյին
Բարակ ծուխ կելնի իմ հոր ոճախեն.
Եթե ուռիներս մարմանդ կորրվին,
Ծղրիդը կե՛րգե անտես խորշերեն...

Մեղմ ճրագի տակ նստել է տխուր,
Ծերունի մայրս՝ մանկիկս դրկին,—
Մուշ-մուշ քնել է մանկիկս անդորր.
Ու աղոթք կանե մայրիկս՝ լռին.—

*) Թարգմանությունը Հովհաննես Թումանյանինն է։

«Ամենեն առաջ թո՛ղ ինքը հասնի,
Ամեն հիվանդի, հետո՝ եամբորդի.
Ամենեն հետո թո՛ղ ինքը հասնի,
Գե՛ղ, իմ խեղճ վորդի՛, իմ պանդուխտ
վորդի»։

Իսահակյանն այստեղ բարձր մարդասիրության պատգամներն է արտահայտել։ Սեփական, նեղ յեսի շահերը ստորադասված են հանուրի շահերին. դա անձնազոհության այն վսեմ ու բարձր որինակն է, վորով այրվում է բանաստեղծի հոգին։ Այս նույն վոգով Իսահակյանը գրել է մի շարք բանաստեղծություններ (տե՛ս. «Ցերեկ տեսա վոր մայրս թշվառ», «Ի՞նչ ես լալիս, անգին ընկերս» և այլն) վորոնց մեջ խիստ յերևան է գալիս Իսահակյանի մեծ ձգտումը դեպի սիրո, հումանիզմի, բարության բարձր վոլորտները, դեպի խղճալը, կատարյալը*)։ Մորը նվիրած յերգերի այս բաժինն ավարտվում, սինթեզվում է «Մոր սիրտը»**) հանրածանոթ խիստ բացառիկ ու հուզիչ բանաստեղծությամբ, ուր Իսահակյանն իր կախարդական գրչով նորից ու նորից վեր է հանում մոր դեպի իր վորդին տածած անսահման սերը։

---

*) Տես «Գրական թերթ», 1937 թ. № 12։ Իսահակյանի հումանիզմը դրսևորվել է նրա մի շարք արձակ գրվածքներում էլ, «Ուշինսքի»-ում և այլուր։

**) Իսահակյանը հայկական այս ավանդավեպը մշակել է յերկու վարիանտով, մեկը հիշյալ վերնագրերն է կրում, մյուսը՝ «Ինեղ Մայրը»։

***

Իսահակյանի քնարական բանաստեղծությունների մեջ սիրո մոտիվների հետ տեղ են գտել նաև բնության յուրաքանչյուր յերգեր։ Ճիշտ է ասված, վոր առանց բնության (ինչպես և սիրո) չկա վոչ մի զորեղ քնարերգություն։

Իսահակյանն իր աչքը բաց է արել ու տեսել է իրեն մեր յերկրի հարուստ բնության գրկում։ Նա իրեն միշտ և ամենուրեք սրտով ու հոգությամբ ընդգացել է հայրենի բնության մեջ.

Իմ սիրտը այնտեղ է, ուր բարձրադիրքի
Լեռներն են իշխում, այն յերկրի վրա,
Ուր յեղնիկները արծիվների հետ անդունդից-անդունդ
Թռչում են անահ։

Ինչպես անտոնիկ Լոռին Թումանյանի գրչի տակ կենդանացրվում է իր զանազանատեսակ ձորերով, նոթերը կիսած մուայլ ժայռերով, այնպես էլ Արագածն ու Մանթաշը Իսահակյանի արարչական գրչից են կյանք առնում։ Թումանյանի մասին խոսելիս՝ Իսահակյանն ասել է, թե նա իրեն բաղմապատկված ել զգում Լոռվա բնաշխարհում։ Ճիշտ այդպես է զգում իրեն Իսահակյանը Մանթաշում, վոր իր պառնան է։ Գոհան իր մի վոտանավորում ասում է, թե Մանթաշին, քառագագաթ Արագածին մեր բանձրիկ յերկրի այդ հիասքանչ զմբուխտե գահին.

—Ե՛րբեք-յերբե՛ք մահ չկա՛...

Մենք կասեցինք Խաչատրյանի այդ զմրուխտե յերգերին եվ յերբեք մահ չկա, վորովհետև դրանց մեջ նա ճշմարտապես ապրեցրել է թե՛ Ալադյազը, թե՛ Արփաչայը և թե՛ արևաշատ Շիրակը իրենց հավք ու թռչուններով։

Զուռ Մանթաշի թև ու թռչունք
Իմ բլբուլին ձեն կառնին,

Ճշմարտապես նկատում է բանաստեղծը։ Մանթաշի, Ալադյազի բարձունքներին, այդ հոգեթով հիասքանչ զահերում և ցանկանում պետք վոչ միայն ապրել ու յերգել, այլև դաղար առնել։

Ցեռ վոր մեռնիմ՝ ինձ կթաղեք
Ալադյազի լանջերում։
Վոր Մանթաշից հովերը գան,
Վրաս հեան ու յերթան։

Թեև յերկար ժամանակ Խաչատրյանն ապրել և արդյունաբերական վիթխարի քաղաքներում (Բեռլին, Փարիզ, Վարշավա, Պոլիս, Հռոմ, Լայպցիգ, Վիեննա և այլուր), սակայն քաղաքաբնակ մարդու հոգեբանությունը գրեթե չի դրսևորվում նրա բանաստեղծություններում։ Հինգ միոցների բավիղներն ու մայթերի քարերը, վոր այնքան հարազատ են յեղել Տերյանին, վանիչ տրամադրություններ են առաջ բերել Խաչատրյանի մեջ։ Ցեվ ընդհակառակը, նրա վոգեշնչման աղբյուրներն են յեղել գյուղաշխարհի

պատկերները՝ հարոնները, սինամ հավքեր, սլացիկ սոսիներ, ցորենի ճոճուն արտեր, բոստան, մանգ, ապոր, բայց յերբե՛ք գործարանների յերկինք քերող ծխնելույզներն ու սալահատակված փողոցները։

Վաթանի՝ գյուղաշխարհի հրապույր պատճառող բնության գեղեցկություններն եյին, վոր աչքերի միջով լցվում եյին բանաստեղծի հոգին։ Այդ բնությունը և, վոր նա վոչ թե նկարագրում, այլ ճշմարտապես ապրում է։ Այսպես որինակ՝ սար ու ձոր Իսահակյանի գրչի տակ դիտեն մուշ-մուշ քնել. յերբ վրա յի հասնում գիշերը.

— Կոպերն իջան լուռ գիշերվա,
Սարին, ձորին բերին քուն.

Մեկ ուրիշ տեղ բանաստեղծը լուսնի գրոսանքն և նկարագրում.

Յերկինքն՝ անամպ, անուշ լուսին,
Աստղերի մեջ մանգ կուզա.

Արևն ել մարդու նման գիտե իր «շող-մատները խաղացնել»։ Վերջապես իրենց ծարավը ջրով հագեցնել գիտեն և ամպերը.

Ամպերն ընկան ծովի վրեն
Հազար բերնով ջուր խմին։

Կարելի յե այսպես յերկարացնել մեջ բերումների շղթան և ցույց տալ, վոր Իսահակյանն իսկապես բը-

նության իր նկարագրությունների մեջ կենդանություն, դինամիզմ և մաքնություն։

Նկատենք և այն, որ նրա մոտ բնությունը՝ որպես առանձին ամբողջական պեյզաժ իր իսկ համար հանդես չի գալիս, այլ պոետի այս կամ այն տրամադրության արտահայտությունն է դառնում։ Երբեմն բանաստեղծը տոգորում է բնությունն իր վշտերով (տե՛ս «Դարդս լացեք սարի ամբուլ» վոտանավորը), յերբեմն հակադիր վիճակներ և ստեղծում իր ներաշխարհի և բնության տեսարանների մեջ՝ «ես ինչ կարմիր վառ արև է, սիրուս մուրճն է քանց դիշերն», յերբեմն դեղեցիկ կերպով համադրում իր հոգեկան բարձր տրամադրությունը բնության ուրախ տեսարանի հետ (տե՛ս. «Երկինքն անամպ ուրախ յուսինց յերդը»)։ Ռոմանտիկներին հատուկ յեղանակներով վոգեշնչելով բնությունը, Իսահակյանն իր յեռին և ծառայեցնում այն, մի հանդամանք, որ նրա ինդիվիդուալիզմն ու սուբյեկտիվիստական լիրիկան և հատկորոշում։ Ի հակադրություն Իսահակյանի՝ Թումանյանի մոտ բնությունը վոչ թե առաջին հերթին հեղինակի ներաշխարհի, այլ նրա ստեղծագործությունների մեջ ապրող քաջերի, լեգենդական հերոսների ու դեվերի մարմնացումն է։ Այսպես ուրեմն, որպես լիրիկ բանաստեղծ՝ Իսահակյանը բնությունն արժեքավորում է իր վրա գործած ազդեցության չափով, հակառակ Թումանյանի, որի համար բնությունը վոչ թե իր անմիջական հոգու թարգմանի դերումն է հանդես գալիս, այլ նրա հերոսնե-

ը*)։ Իսկ յերբ Իսահակյանը փորձում է փիլիսոփայական աչքով նայել բնությանը, հանգում է պանթեիզմին, բնասովածության պաշտամունքին։

Իսահակյանի յերգած մոտիվների մեջ չի կարելի զանց առնել «Իր վոսկի ամպի պես անցած», առհավետ անվերադառնալի մանկությունը, պատանեկությունը. «Ջահել հպարտ հասակիս»-ն նվիրված յերգերը.

Ե՛յ, դու, ջահե՛լ, հպա՛րտ հասակ,
Անցար վոսկե ամպի պես.
Քեզ հետ տարար յերգերս ու սերս,
Տարար գարունն իմ սրտես։
Քար կըսեղմեմ սրտիս հիմա.
Կելնեմ տարիքը լալու,—

Զգացմունքների վերիշխանության պահին են ասված այս խոսքերը, վոր ստկայն պետք է տեղի տան գիտակցության, և այն ժամանակ բանաստեղծը կասի.

Ա՛խ, լաց ինչքան, ինչքան կուզես,
Անցածն ել յետ չի գալու...

---

*) Մեր խոսքը վերաբերվում է Թումանյանի վոչ քնարական բանաստեղծություններին—։

Խաչատրյանի յերգերի այս բաժինը ես սինթեզվում է մի հզացմամբ, դա «Ապրած իմ կյանքից» վառանավորն է, ուր բանաստեղծն իր անհատականության բոցե կնիքն է դրել, տարբերվելով բոլոր այն գրողներից վորոնք նույնպես յերգել կամ քնարոշել են մանկությունը, հանախ իրար շատ նըման, շաբլոն ձևով: Խաչատրյանը, կրկնում ենք, յուրովի յի քնարոշել իր ապրած կյանքի մանկության յերգաղ սրտերը,—

Ապրած իմ կյանքից
Մի սուրբ յերգաղի
Բուրմունքը մնաց
Սրտումս անմոռաց—

Այն վոր՝ ջերմ լացի
Առանց տանջանքի,
Խորունկ սիրեցի
Առանց տենչանքի...

Իսկապես մանուկը սրտանց, շատ ջերմ և լաց լինում, բայց վորովհետև նրա լացը մեծ տանջանք չի պատճառում, ուստի շատ շուտ էլ արցունքը կարող և ծիծաղի փոխվել: Մանկան հոգեբանության յերկրորդ քնարոշ հատկանիշն և ջերմորեն սիրելը—սեր, վոր չի զարթեցնում նրա մեջ տենչանք, այդ և պատճառը, վոր այսոր վորևե մեկին՝ խորապես սիրող մանուկը՝ վաղը կարող և հեշտությամբ մոռանալ: Մանկան հոգեբանությունն այդպես և, ինչպես քնո-

լուշել և պոետը, ջերմ կուլա առանց տանջանքի, խրոնկ կսիրի առանց տենչանքի։

Մանկության և պատանեկության մասին գրած վերոհիշյալ բանաստեղծությունների հետ մեկտեղ ուշադրության արժանի են նաև Իսահակյանի այն յերգերը, ուր պոետը ցուցաբերել է նաև իր մի այլ հատկությունը, այն է՝ կարենալ մտնել ուրիշի հոգության մեջ, զգալ նրա զգացմունքները ու ապրումները, և լինել դրանց թարգմանը։ Իր «Բալես ունի հնդու մաթաս», ինչպես և «Սև միղարան» վոտանավորի մեջ Իսահակյանը կարողացել է ցուցաբերել իր այդ, յեթե կարելի յե ասել, «մայրանալ» կարենալու հատկությունը։ Բանաստեղծը կարողանում է հարազատորեն վերարտադրել այն գորովն ու խանդաղատանքը, վորով համակված է մայրն իր յերեխային խաղացնելիս։ Հիշյալ բանաստեղծության բովանդակությունը հարմար է այն թեթև, ծաղի տվող խաղացկուն չափը, վորով հագնված է վոտանավորը։ Այդ չափը յերգը դարձնում է աշխույժ, դյուրընթեռնելի. ընտրված համապատասխան բառերը կարծեք թոթովախոս մանկան լեքսիկոնից առնված լինեն։ Այս ամենը այնքան վարակիչ է դարձնում յերգը, վոր մի անգամ, յերբ սկսում ես կարդալ, այնուհետև ծանոթ հին յեղանակի նման միշտ մտքումդ կրկնել ես ուզում.

Բալես ունի հնգու մաթա.
Վռակի որոցք, ատրաս ծածկոց,
Պուպուշ դար-դար, նշխուն բալա,
Պահիկ կենես... որ, որ, լա լա:

Պոետի այս փաղաքուշ յերգը, վոր այնքան կենսախնդիր ու յի ուրախությամբ ներ հնչում հայ գեղջուկ մոր բերանից, անանք թե ինչպես և փոխվում, յերբ շար թշնամու հուրն ու սուրն և փայլատակում նրա գլխին: Այդ յեղանից ազատվելու ու իր մանկանքն ազատելու համար սարերը փախչող ու այնտեղ ապաստան գտնող գաղթականն գարձած մոր որոշոցի յերգն այս անգամ փոխվում և այսպիսի լալահառաչ նվագի.

Սև մլիզաբրս ճոճք եմ արել,
Ճոճք եմ կապել ծառերին.
Լալեն, լալեն քուն ի մլաել
Իմ վարբ բալեն, իմ լալեն:
Նանիկ երա՛, նանի դար դար,
Դարդեր ունիմ, քանց ծով ու սար:

. . . . . .

Զար թըշնամու հրբեն, թրբեն
Փախած, ընկած սար ու քար.
Թեզի հար լուռ սրբարս վրբեն
Գրբկած լացի սար ու քար:
Ո՛ր որ, բալաս, ո՛ր ո՛ր, նանի,
Քամբախա մնրդ չարդ տանի:

Գավառքյան նոխազ դարձած հայ գաղթական մոր սրտրոցի անզուգական յերգն է սա, տրված այնքան ռեալիստորեն, վոր թվում է թե վոչ թե Իսահակյանը, այլ հենց ինքը, գաղթական մայրն է այդ յերգը հորինողը:

Իսահակյանի քնարը նրա գրական գործունեության համեմատաբար հասուն շրջանում արձագանքել է հասարակական-քաղաքական կյանքի մի շարք յերևույթներին ևս՝ տալով նրանց յուրովի մեկնաբանություն: Այդ խնդիրներից են դլխավորապես աշխարհում գոյություն ունեցող սոցիալական անարդարությունների վերացումն ու ազատ հայրենիքի գաղափարը, վոր գերել է պոետին, ինչպես ինքն է ասում, տակավին պատանի հասակից, լինելով նրա մտահոգության մշտական առարկան: «Պատանի հասակից ինձ մշտապես հուզել է, մտալլկել և աշխարհիս մեջ գոյություն ունեցող չարիքը—աղքատությունը, տգիտությունը, բռնությունը, շահագործումը, վոճիրները: Ինձ տանջել է հայ աշխատավոր ժողովրդի դառը վիճակը՝ սուլթանի և ցարի դաժան լուծերի տակ, և այդ չարիքները վերացնելու գործը, փրկության միջոցները»*):

Սրանից յերկու տարի առաջ ասված հիշյալ խոսքերը իսկապես պատանի հասակից Իսահակյանի

*) «Գրական թերթ» 1937 թ. № 12

մշտական մոռացկոտության առարկան են յեղել։ Թեվ ի՞նչպես կարող եր խեղճի դատի ակնհայտ պաշտպան Իսահակյանի նման պոետը մշտական մոռացության առարկա չդարձնել։ Բայց ու ամարթ դարձած իր վաթանի, և

Հրին, Ջրին
Ու սրին կուր

գնացած հայ աշխատավոր ժողովրդի դառն վիճակը։ Բանաստեղծի հոգին թունդ և առնում, յերբ լսում և 1918–20 թ. թ. տեղի ունեցող կոտորածների մասին։ Ի՞նչ եր մնում յերգել նրան, յեթե վոչ

Կսկի՛ծ, կսկի՛ծ...

Մեր բովանդակ ժողովրդի ընդհանրական դարձած վերքերն ու կըսկիծն եր դա, վոր իր անձնականը համարելով յերգում եր Իսահակյանը։ Ուստի ե՛լ ավելի յե մեծանում նրա քնարի հասարակական նշանակությունը։ Նրան համազգացողների թիվը դառնում եր բազմապատիկ։ Պոետի գործերը կարդում եր մեր բովանդակ ժողովուրդը, վորի ֆիզիկական վոչընչացման վոդրն եր յերգում նա։ Իսահակյանը սրդում եր հայ գեղջուկի որհատական վիճակը, յերբ նրա արտերը հասկաբեկ եյին արվել թշնամու սրով, մնացել եյին խոպան, ամայի, ակոսների մեջ քռնակալը մորթել եր մանկալին, անխոնջ ամուլին։

Պատուհասվող գեղջուկի վշտից եր, վոր փրզձ-

կում ենք բանաստեղծի մեծ սիրտը և առատ ազգությամբ խփում նրա քնարական լերդը.

Հայոց գեղջուկի ծարվալուն արտե՛ր,
Ավետարանի եղերի նման
Ինկարո՛ւյր, ոծուն հավի՛ր սրբապան,
Թշնամու սրով հասկաբեկ արտե՛ր։

Խոպան մնացիք՝ անտեր, ամայի,
Ակոսներիդ մեջ մորթեց մաշկալին,
Մանուկ հոտաղին, անխոնջ ամոլին
Դարերի գժխեմ վոսոխն ամեհի։

Նույն լերդի հաջորդ տողերում հայ գեղջուկին էմեռնող ցորենի անմահ սերմերթ-ի հետ համեմատելով, բանաստեղծը աննկուն հավատք և հայտնում, վոր շուտով այդ էանմեռ ցորենիթ հատիկների պես բազմապատկվելով լեն հայոց գեղջուկները և նրանց համար բացվելու լե ազատության վոսկի արշալույսը,—

Հայոց գեղջուկնե՛ր, լեղբայրնե՛ր Հոդո՛ւս
Ձեր արյունապանգ արտերի վրա
Դրախտի փառքով պիտի հուրհրա.
Մեր ազատության վոսկի արշալույս.

Այս հավատքով համակված Իսահակյանը, ինչպես կտեսնենք, իր հետագա բանաստեղծություններում, կոչ և անում ժողովրդական մասսաներին թոթափել

բանակաձևերի ստեղծագործ լուծը։ Նման մոտիվներն տեղատու տեղ են գտել Խաչատրյանի լավ իմաստով հայրենասիրական յերգերի բաժնում, և իսկապես մի-թե Ֆեոդալական սուլթանական Թյուրքիայի և ցարական իմպերիալիստական Ռուսաստանի կրկնակի լծի տակ հեծող, ազատություն տենչացող մեր հանճարեղ, բայց խոշտանգված, հազար անգամ լկված ժողովրդի, նրա զարկված ու զրկված հայրենիքի վիճակի մասին չի՞ նաև «Հե՛յ Ջա՛ն հայրենիք, ի՞նչքան սիրուն եաթ», հիրավի սիրուն այս բանաստեղծությունը.

Հե՛յ, Ջա՛ն—հայրենիք, ի՞նչքան սիրուն եա,
Սարերդդ կորած յերկնի մոգի մեջ.
Ձորերդդ անո՛ւշ հովերդդ անո՛ւշ,
Մենակ բալիքդդ արուն—ծովի մեջ,

Բանաստեղծը մի կողմից «ազիզ հայրենիքի» բնական գեղեցկությունները և պատկերում, մյուս կողմից այդ հայրենիքի արուն–ծովի մեջ գտնվող բալիքի հակադիր վիճակն և ներկայացնում, իսկ ամենից վերջում այնքան անձկությամբ մի բան և միայն տենչում՝ տեսնել վերկության առավոտի կարոտ «ազիզ հայրենիքի» ազատությունը, նրա «նոր որվա ծեղը», «որպեսզի «արտուտի պես» վեր ու վեր ճախրելով՝ լեռներ «բարձր ու գիր» յերգի նրա «կանաչ արևը»։ Խաչատրյանի տակավին 32–33 տարի առաջ գրած թե՛ «Հե՛յ Ջան հայրենիք» բանաստեղծության մեջ, և թե՛ գրական մի այլ ժանրի գործում՝ «Գարիբալդիականը» վերնագրով պատմվածքում, ու այդ

վոգով գրված նրա բովանդակ հղացումներում դժվար չէ տեսնել Իսահակյանի ազգային ազատագրական շարժման գաղափարներով կրակված լինելու հանգամանքը, մի բան, որ բնորոշ է նրա աշխարհայացքի դեմոկրատական վոգուն, և կենդանի ապացույց այն բանի, որ իսկապես Իսահակյանին, ինչպես ինքն է ասում, «տանջել է հայ աշխատավոր ժողովրդի դառն վիճակը՝ սուլթանի և ցարի դաժան լուծերի տակ»*) և որ բովանդակ ժողովրդի ազգային ազատագրման համար խրախուսելի որինակ է համարել «Գարիբալդու» շարժումը: Սոցիալական հազեցվածություն ունի անշուշտ Իսահակյանի քնարը (թեև վոմանք համամիտ չեն*):

Նա քանիցս ամբողջ թափով ծառա է յեղել թե՛ իմպերիալիստական նկրտումներով լռնված ֆեոդալական Թյուրքիայի և ցարական Ռուսաստանի, և թե՛ բուրժուական «արուեստքներ», զուլում աշխարհի դեմ, ուր անաշխատանքն ու պորտաբուծները շահագործման վայրագ մեթոդներով զրկել են «քարից-հողից» հաց քամողներին, և փոխարենն իրենք վայելել «աշխարհի ճոխ սեղանից»: Տեսնելով իր հարազատ հանրային հատվածի «դառը դատածը» ու դաժան նրատած վիճակը, բանաստեղծը բողոքի ձայն է բարձրացնում տիրող սոցիալական անարդարության, անհավասարության դեմ:

---

*) Տե՛ս «Գրական թերթ», 1937 թ. № 12

*) Տե՛ս «Մուրճ», 104 թ. № 8 Ալ. Ռուբենի հոդվածը:

Հարուստ մարդիկ կուտեն խմեն
Աշխարհի ճոխ սեղանից.
Մենք աշխարհի խորթ տղերքն ենք,
Մեզ փայ չքիա աշխարհից:

Մեղմ աղքատի հոգին դուրս գա,
Քարից—հողից հաց քամե.
Բնռով հացը հարբատին տա —
Հարուստն իշխե, վայելե:

Մեղմ աղքատը դուռը դատի,—
Դատարկ նստի... ե՞յ աշխարհ,
Եվ ինչո՞ւ յես քարը թողնում
Քարի վրա, քար աշխա՛րհ:

Ռուսական առաջին հեղափոխության նախորեյին (1901 թ.) գրված Իսահակյանի այս հղացումը բողոք չեր ուղղված առ աստված, այլ սոցիալական հաղեցված յերույթ՝ «ինչպիսի բուրժուազիայի*) ստեղծած կարգ ու սարքի դեմ: Սոցիալական հաղեցվածությունն ու զասակարգային պայքարի արտահայտությունները, թեև յուրովի, բայց գնալով ավելի սուր կերպարանք ու արտահայտություն են ստանում մեր պոետի 1906 և հետագա տարիներում հեղափոխության ազդեցության տակ գրված բանաստեղծությունների և արձակ գործերի մեջ, ուր այլևս տակ տրտունջներ, դժգոհություններ ու գանգատներ չեն,

*) Իսահակյանի արտահայտությունն է:

վոր լսվում են խեղճ աղքատի շահերից խոսող դեմոկրատ բանաստեղծի քնարի լարերից։ Շահագործող դասակարգի անարդ, սարկացնող լուծն իր ուսերից թոթափելու կոչ է արձակում այստեղ բանաստեղծը աշխատավոր դասակարգին.

Ցե՛լ աշխատավոր, սարուկ ժողովուրդ,
Ցե՛լ լուծդ քցիր, յեղիր ինքնիշխան.
Քրտինքիդ տերը մենակ դու յեղիր,
Մեկնեն կկոչեն աղա, խան, իշխան։

Ազատությունն է հացն այս աշխարհում,
Ցերդեցեք դովքը ձեր ազատ հացի։

. . . . . .

. . . . . .

Առաջ գնացեք, աշխատավորներ,
Ցերդելով դովքը ձեր ազատ հացի։
Առաջ, անհողդողդ, յերկրի տերն եք դուք։*)

Այս և նման վոգով գրված այլ յերգերը, արդյոք իրավունք կտա՞ն մեզ ասել, թե մեր բանաստեղծի էսոցիալական քննադատությունը վերածվում է ընության և մարդու վերացական քննադատության**)։ Ըստ ընկ. Կիրպոտինի՝ «Ներան (Իսահակ-

---

*) «Հառաջ», 1906 թ. № 23

**) Վոչ միայն իր այդ յերգերում, այլ և արձակ դրվածքերում Իսահակյանը պայքարի ակտիվ ներգործական ուղի յե բռնում, նրա Ոհան ամին (տես՝ «Հմայելյանքի Զիրուխը» ժողովածուն) Աղայանի՝ Աբդուռամանի ու Թումանյանի՝ Զաղինի նման պայքարի յե յելնում հողաբաժանության ժամանակ տիրող կարգերի դեմ։

յանին Հ. Ղ.) թվում և, վոր չարիքի, անարդարության և մոլորությունների մեջ մեղավորը վոչ թե հասարակությունը, այլ մարդկանց բնությունն է»: Մենք տեսանք և կտեսնենք, վոր վերոհիշյալ, ինչպես և այլ հղացումներում, Խաչատրյանի էսոցիալական քննադատությունը չի վերածվում սոսկ բնության և մարդկանց վերացական քննադատության*): Բանաստեղծի քննադատությունից չի յերևում նաև այն, թե «չարիքի, անարդարության և մոլորությունների մեջ սոսկ մարդկանց բնությունն և մեղավորը»**):

Մեղավորը աշխարհը գուլում գարձնող, «դառը դառագ» խեղճ ապրանների հաշվին ապրող, հարուստ

---

*) Ցնթե հիրավի նուիրեալ «Աբու-Լա-Լա Մահարիի»-ի մեջ ել հեղինակի քննադատությունը «սոսկ» բնության և մարդկանց վերացական քննադատության հանդեր, ապա ցարական դրությունը այդքան չատ չեր վախենա և չեր արգելի պոեմի ամբողջական տպագրության գործը Թուլուսանում։ Ինչուչտ, «Աբու-Լա-Լա»-յի մեջ ել բանաստեղծը ապստամբվել է տիրող հասարակական կարգերի, գոյություն ունեցող օրենքների դեմ։ Այդ ապստամբությունը նիչտ և յուրովի եր, շատ եր, բայց ապստամբություն եր։ Ինչ վերաբերվում է «Սասմա Մհերին», այդ մասին չենք խոսում, ուր արդեն չատ ավելի վորոշ և արտահայտված բուրժուական կարգերի հիմն ի վեր խորտակման, աշխարհն ավերելու հեղինակի ոգեշնչումները, ամենուրյան բերելու նպատակով։ Խաչատրյանի ամբողջական ստեղծագործության ընդհանուր յեզրակացությունը պարզ է.— չարիքի, անարդարության, բռնության խնդրում նա մեղավոր է համարում, վոչ թե սոսկ մարդկանց բնությունը, այլ և հասարակարգը։

**) Տես. В. Кирпотин «Поэзия Армянского народа» Москва, 1938 г. стр. 83.

մարդիկ են։ Ճիշտ է, Իսահակյանի սոցիալական քննադատությունը փոքր ինչ յուրօրինակ բնույթ ունի, բայց կրկնում ենք, այդ չի նշանակում, թե նրա մոտ այդ քննադատությունը վեր է աճվում գրնության և մարդկանց վերացական քննադատության։ Այսպես մոտենալ խնդրին՝ նշանակում է արժեքազրկել մեր հեղնակի պոեզիայում յեղած սոցիալական հարցերին վերաբերվող քննադատությունը։ Մեկից ավելի անգամ գանենա նշավակելով խլխող բռունցքը՝ հաշտության, հնազանդության խոսք չի ասում պոետը։

Անհուն վրեժի և ատելության
Դրժոխքն է այրում թունոտ իմ հոգին.
Ցեվ յես չեմ բերում խոսքը հաշտության,
Վոր ծանր է պատկում աղքատի ուսին։

Ցերազկոտ սիրո յերգեր հորինող պոետը Հայաստանին է հիշեցնում պայծառ պարագաներում, վորն իր մասին ասել է.

Մի՛ նվա կյանքում Վերթերի նման.
Վոր սիրում է սոսկ Շարլոտաններին,
Հնչիր դու ինչպես զանգը տաղնապի,
Դաշույնը յերգիր և սուրը յերգիր։

. . . . . .

Ցեվ մի՛ թող յերբեք յերկիրդ ննջի
Մի՛ լինի սրբինդ դու մեղմ ու անուշ,
Կամ վողբերգական մի քնքուշ հոգի...

Եվ հիրավի ծծաղկանց և սոխակների կուսակցության պատկանող Իսահակյանը Հայնեյի նման պայքարի յե յելնում հատու զենքերով, յերբ պահանջում են այդ իր հանրային հարազատ հատվածի աշխատավոր ժողովրդի շահերը. բուրժուական հասարակությունում, ուր դարվինիզմի բացարձակ որենքն և իշխում, պարզ և, վոր շարության իմաստին չի կարելի և չպետք է սիրս սրինդով թողել. ուստի պոետը յուրովի կռվի կոչ և անում, բարձրացնում և աղքատի բազուկը՝ «ինչպես վոխակալ ոձն անապատի» և նրա ձեռքին տալիս և դնում ահեղ ճշմարտություն։ Սակայն յերբեմն ընկնելով ստորոտի աղջկությունների տակ՝ բանաստեղծի համար կասկածելի յե դառնում տալիս ճշմարտության զոյություն ունենալը. այդ և պատճառը, վոր նա կյանքի կռվում զոյություն պահպանելու մի այլ, իր դեմոկրատական վեդուն անհարիր թեզ և զարգացնում, այն և՝ ճշմիկ իրենից թուլին, ապրել նրա հաշվին։

Կյանքն և պայքար՝ զոռ ու զաժան,
Ճշմիկը մարդուն թշուառ վիճ,
Իրավունքը ուժն և միայն,
Վայ հաղթվածին, հազար վայ։
Տեր կամ ստրուկ պիտի լինես—
Ճշմարտություն չը կա ուրիշ։

Ինչպես յակոբյանությանը վերջ շարունակներ կան այստեղ*)։ Իսահակյանը ինքն ել խոստովանել և Ինչպես

*) Նման ձևական նմանություն զոյություն ունի Իսահակյանի այդ վերանվերի և Գյոթեյի Koptisches Lied-ի միջև։

ազդեցություն իր վրա.*) սակայն այդ բանը իրավունք չպիտի տա վորոշ քննադատներին մեր պոետին նիցշեյի «ճանաչված», հետևողական աշակերտն անվանելու։ Եթե Իսահակյանի համար իսկապես նիցշեականությունն ամբողջական, հետևողական աշխարհայացք լիներ (վորպիսին մենք չենք ընդունում), ապա ի՞նչու, յերբ հերթը իրեն է հասնում ճշմելու ուրիշին, նա չի կարողանում կենսագործել իր քիչ առաջ արծարծած մուրճ կամ զնդան լինելու, իրենից թույլին հալածելու տեսակետը։

Կյանքի կըռվում ամենքը դեմ ամենքի՝
Սուր են սըրում ամենքը դեմ ամենքին.
Սուրը ձեռքիս՝ կըռիվ հանած ընկավ վար,
Ես չեմ կարող մըտնել պայքար անարդար—

Ելել բերնից արնոտ հացը աղքատի,
Վառ քըրտինքը ծըծել տանջված ճակատի։

Իսահակյանի աշխարհայացքի մեջ աշխատավորական, դեմոկրատիզմի վոգին ամուր նստած լինելով՝ թույլ չի տալիս նրան զնլմարդը դարձնել իր դրոշակը, ճնշելով, ճզմելով թույլին, տնանկին խըլել նրա բերնից «արնոտ հացը»։ Ճիշտ են նկատել պրոֆ. Ա. Տերտերյանը, Կիրպոտինը և նրանց հետևորդները, թե՝ Իսահակյանն անվթար է մնացել նիցշեական

*) Տես Իսահակյանի Վեսելովսկուն գրած նամակը, տես նաև 1937 թվականի «Գրական թերթ»-ի ապրիլի 29 համարը։

շնականության դիշատիչ կողմից*)։ Երբ յերևում ենք Իսահակյանի համայն ստեղծագործությունների եյությունից, պարզ յերևում է, որ Նիցշեականությունը նրա մոտ ոսարտուի, դրքերից քաղված գաղափարներ են, կամ բերովի, շորացած արմատներով մի բույս, բայց յերբեք խոր համոզմունք ու կազմակերպված աշխարհայացք։ Եվ հիրավի. չե՞ որ Նիցշեյի քարոզած արիստոկրատ դեմոկրատ Իսահակյանի անհաշտ թշնամին է, այն Իսահակյանի, որը ազատություն, սուրբ ճշմարտություն և սիրել ու ունչացնել իր «կյանքի շեմքից»։

Զայնս հնչում է խավարի խորքից,
Դրթա, հայտնվիր սուրբ ճշմարտություն.
Ես քեզ եմ փնտրել իմ կյանքի շեմքից,
Եվ տես. քարացա անհուն տանջանքում։

Վորո՞նք եյին այն բյուր ուղիները, որոնցով ընթացող պոետը ուզում եր բռնել իր վաղուց յերազած կապույտ թռչունը (ազատությունը)։ Երկու տարի առաջ, իր անցած ճանապարհի մասին խոսելիս, Իսահակյանը խոստովանել է հետևյալը. «Ինչո՞վ չեմ տարվել, ի՞նչ փիլիսոփայություն, եթիկական, հասարակական սիստեմներով՝ ազատագրելու տառապող մարդկությունը։ Եղել եմ սոցիալական,

---

*) Գրոֆ. Ա. Տերտերյան. «Հայոց նոր գրականության պատմություն» 19-20-րդ դ. դ. պրակ. 5-րդ, Ա. Իսահակյան; 1939 թ.— Երևան։

նիցշեական, Գերմանիայում ուսանող ժամանակ՝ սոցիալ-դեմոկրատ: Հուսահատված դարձել եմ անիշխանական, պեսիմիստ: Տարվել եմ Բուդդայով»:*
Ահա Իսահակյանի անցած այն «բյուր ուղիները», բյուր կեռմանները, վորոնցով ընթացողը պարզ և, վոր չեր կարող գտնել «սուրբ Հշմարտությունը», այլ կմնար շվար այդ ուղիների լաբիրինթոսում:

Սակայն չմոռանանք կրկին շեշտել այն, վոր սկզբից Իսահակյանի մեջ յեղել և խեղճի դատը պաշտպանելու իղձը: Եվ նա ամենուրեք, թե իր բանաստեղծություններում (մենք արդեն տեսանք այդ), և թե հոդվածներում ու նամակներում չի հոգնել, չի խնայել նշավակել այն անաշխատ, ընչաքաղց դասակարգը, վոր ապրում եր խեղճ աղքատի հաշվին, վորը «լրբենի» ծաղրով արհամարհում եր «հայ ստեղծագործ միտքը», քաղցի յենթարկելով նրա անխոնջ մըշակին: Ծատուրյանին, նրա գրական գործունեության 25-ամյակի առթիվ գրած իր մի նամակում, այդ կապակցությամբ այսպիսի տողեր ենք կարդում: «... Իմ ավագ ընկեր, իմ սիրելի ընկե՛ր, և դուք մի հավատացեք այն ծափերին և ճառերին, վորոնք վաղը վորոտալու յեն, ի պատիվ Ձեզ. իմ խորին համոզմունքով հայ գրական խոսքը միշտ արհամարհված և և հայ ստեղծագործ միտքը միշտ ծաղրված հենց այն մարդկանց կողմից, վորոնք վաղը կուլա վորկորով պիտի շրջապատեն Ձեզ, մյուս որը Ձեզ նորից արհա-

---

*) «Գրական թերթ» 1937 թ. № 12

մարհելու և ծաղրելու համար»*)... Հետաքրքիր և իմանալ ովքեր են այդ անձինք, որոնք արհամարհում են մեր ստեղծագործ միտքը։ Նամակի հաջորդ տողերից հայտնի է դառնում այդ. «Դուք մի՛ հավատացեք,— շարունակում է Խաչակյանը,— մեր անդրադառնալ ինտելիգենցիային, մեր այլասերված ուսանողությանը և մեր գիշակեր բուրժուազիային. նրանք, որոնք ոչանննա են տալիս Ձեզ, հավատացնում եմ Ձեզ, որ չեն էլ կարդացել Ձեր ստեղծագործությունները»։ Ահա այդ «գիշակերը», «գլուխը ոտարացած», նյութապաշտ, այլասերված բուրժուազիայի ու նրա անպատուղ, պարապուրդի զբաղմունքի համար է, որ պոետը գուշակում և գալիքում վրդովում.

Ցեղս ձեզ ասում եմ՝ կրգա վրդու սով,
Ցեղվ դուք կրքաղցեք ճոխ սեղանի մոտ,
Կընկնեք մուրալու հարբած վորկորով՝
Հրրեղեն խոսքի, վեհ խոսքի կարոտ։
Լրբենի ծաղրով արհամարհեցիք
— Վրդու վառ զեղմունք-միտք ու յերազանք,
Նյութի տաճարում արբած պարեցիք՝
Մոռացած անմահ, անհունի տենչանք։

Դուք, որ հեղնեցիք ուժն ստեղծագործ՝
Ձեր նյութի հանդեպ կրգա վրդու սով.

---

*) Խաչակյանի այս նամակը լույս է տեսել արվեստի վաստակավոր գործիչ ընկ. Գարեգին Լևոնյանի խմբագրած «Գեղարվեստ»-ի 1911 թ. № 4-ում։

Ցեվ մուրացկի պես փշրանքի համար
Մաքավ ու նոթի կա՛նցնեք ծո՛վն ծով...

Լինելով հասարակական–քաղաքական կյանքով ապրող, և վերին աստիճանի շուտ տպավորվող բանաստեղծ, Բրյուսովի խոսքով ասած՝ ЭХО ПОЭТ:

Իսահակյանն իր ժամանակ արձագանքեց մեր մոտիկ անցյալի հասարակական–քաղաքական կյանքի անցուդարձերին: Ցեվ այն ժամանակ, յերբ այլ բանաստեղծներ ազգամիջյան կոտորածներ եյին հրահրում՝ ռազմի կարոտ բազեյի նման ծղրտալով հանուն «հավերյալ արյան» շիթերի, նույն այդ ժամանակաշրջանում եր, ահա, վոր խաղաղության, հաշտության, արբաղան դաշինքի, ազատության խրոխտ ու լիաթոք զանգի ղողանջներ եյին հնչեցնում մեր ամենազեմոկրատ հեղինակներից յերկուսը՝ Թումանյանն ու Իսահակյանը.

Ազատության զա՛նգ, դու վե՛հ ղողանջ՝
Կովկասյան վսե՛մ, վե՛ս բարձունքներից,
Ինչպես մրրիկը, շաչե՛, շառաչե՛,
Մինչև սիգապանծ ազատն Մասիս:

Անհագ վրեժի և ըմբոստացման,
Ցե՛վ բուռն ցասման բարբառը հնչե՛,
Ժողովուրդների անկա՛խ, ինքնիշխա՛ն՝
Դաշն ազատական խրոխտ ղողանջ՝:

Բուռն վոգեվորության և համակ ներշնչման ար-

գասիք և Խահակյանի այս յերգը. վոր նպատակ ունի արդարև դարավոր նիրհից արթնացնելու Մասիսն ու Կապրիկը: Բանաստեղծը մահու և կենաց սրայքարի յե վոգևորում Կովկասի բովանդակ ժողովուրդներին «ընդդեմ բռնության, ամբարիշտ չարի», վորը տապալվի պիտի աշխարհասասան ուժերից, և նորոգ արևի տակ ազատության դանդը պետք և տարածի իր զոդանշները համասփյուռ «բյուր գաղաթներից ազատ Կովկասի»:

Խահակյանի «Ազատության դանդը» գրված է 1903 թվին: Մենք դիտմամբ շեշտում ենք այդ հանգամանքը, վորովհետև բանաստեղծը հիշյալ գործով կանխել ևր ուզում մոտալուտ ազգամիջյան ջարդ ու ավերմունքները, վոր պիտի տեղի ունենային և ունեցան 1905–6 թ. թ.: Այն, ինչ այդ որերին ապիտակ դրոշակը պարզած կարոզանում ևր անել Թումանյանը Լոռում և մերձակայքում «իրար դեմ կանգնած ժողովուրդների արերը պատյանը դնել տալ»-ով, այդ նույն նպատակին ևր հետապնդում նաև «Ազատության դանդ»-ի հեղինակը «սուրբ յեղբայրության տոնին» կանչելով Կովկասի բովանդակ ժողովուրդներին: Խահակյանի այն խոսքը, թե «ազգերի յեղբայրացման վոսկի ոգակն ևր Թումանյանը...»,*) վերաբերում է նաև իրեն: Խահակյանն ու Թումանյանը ամեն կերպ աշխատել են արերի հեռան դարձած յերկիրն ու վոգջ ժողովրդը հեռու պահել ազգամիջյան ջարդ ու ավերից: Ճիշտ և ասել Բրյուսովը, թե «ПОЭТ ВСЕГДА С

*) «Արևելք» 1923 թ. եջ 299:

людьми, когда шумит гроза»։ Հիրավի, իր ժողովրդի զոյության, նրա փրկության ու հաշտության յերգը յերգելն իր ավելի կարևոր Իսահակյանի համար նըման դեպքերում, քան սիրային լիրիքական տրտունջները, վորի համար նա այլ անգամներ բավական ժամանակ իր տրամադրել։

Գրականության պատմության խնդրության դեմ մեղանչած կլինեյինք, յեթե չասեյինք, թե Իսահակյանն իր մի շարք հայրենասիրական, ազատասիրական վոգով գրված վոտանավորների կողքին («Հե՛յ ջան հայրենիք, ինչքա՞ն սիրուն ես», «Հայոց դեղջուկի ծավալուն արտերը» և այլն), իր քնարին հիմնականում վոչ բնորոշ, մի քանի այլ նվագներ ել և հնչեցրել։ Այդ զգալապես սակավ դառն յերգերի առաջանալու պատճառը կարելի յե բացատրել Թումանյանի հետևյալ պատկերավոր արտահայտությամբ. «Են վարունգի թուին ինչ և, հայտնի յե, վոր յեթե նա ել վոտի տակ և ընկնում՝ ել նրա պտուղը չի ուտվում, ենքան և դառնանում։ Նրա համար ել Զեղ թուլ չեն տա, վոր նրա թուփը տակով անեք։ Եղպես դառնանում ու դաժանանում է մարդը, նրա հոգին, սիրտը, միտքն ու ներքին դառնությունը դուրս է տալիս, հայտնվում և՛ աչքերում, և դեմքին, և խոսքերում, և գործում, և ամեն տեղ, ամեն ասպարիզում ու ամբողջ կյանքը դարձնում է դառն ու դա-

ժանդ*)։ Հիրավի այդպես կոխոտելով մեր ժողովրդին, ֆեոդալական Թյուրքիայի և ցարական Ռուսաստանի ծանր սապոգը զառնացրել է նրան։ Ահա այդ դառնությունն է, որը յերբեմն արտահայտվել է մեր ժողովրդի բանաստեղծական բերանը հանդիսացող ազգանների յերգերում։

***

Իսահակյանի 1908 թվին լույս ընծայած բանաստեղծությունների ժողովածուում արդեն նկատելի յին հակումներ դեպի գրական այն ուղղությունը, որն անցյալ դարի 90-ական թվականներին սիրաբար իշխում էր ռուսական և յեվրոպական գրականության վրա։ Չեմ խոսում եմ սիմվոլիզմի և նեոռոմանտիզմի մասին։ Իսահակյանը Տերյանի հետ մեկտեղ մոտիկ լինելով գրական այդ ուղղություններին, կարողացավ նրանց բոլոր գրական կողմերը (լեզվի, չափի, յերաժշտության) բերել հայ գրականության մեջ՝ դեկադենտական ծայրահեղությունները ու այլ կարգի սեթևեթությունները բաժին թողնելով ուրիշներին։

Վալերի Բրյուսովը նշելով սիմվոլիստական գրականության ազդեցությունն Իսահակյանի վրա, գրում է. «Սիմվոլիզմն արտահայտվել է հայ պոետի ստեղծագործությունների միայն իր հիմնական գը-

---

*) «Հորիզոն», 1910 թ. № 130, «Դառնացած ժողովուրդը»։

ծերով, ավելի շուտ վորպես աշխարհայացք, քան վորպես գրական ծրագիր*)։

Այո՛, Իսահակյանի մոտ սիմվոլիզմն ավելի շուտ իբրև աշխարհայացք և հանդես յեկել, քան վորպես գրական ծրագիր։ Իսահակյանն ընդհանրապես ավելի դեմոկրատական նեոռոմանտիզմին և մոտ, քան սիմվոլիզմին։ Ցերբ համեմատում ենք մեր պոետի ստեղծագործությունները (խոսքն Իսահակյանի ժողովրդական յերգերի վոգով գրվածքների մասին չե), շատավոր սիմվոլիստ Տերյանի, նեոռոմանտիկ Հայնեյի յերգերի հետ՝ ակնբախ և դառնում նրանց և Իսահակյանի արտահայտած տրամադրությունների հարազատություն։ Վոչ միայն տրամադրությունների հարազատությունը, այլև հարանման զգացումների արտահայտության ընտրոշ յեղանակներով ել Իսահակյանը նմանվում և այդ պոետներին։ Նրանց նման՝ Իսահակյանը ևս հաճախ սիրում և իր ապրումները յերազի ձևով արտահայտել։ «Ցերազ տեսա ձեր տան առաջ», «Ցերազումս տեսա որոր ու շորոր» և այդպես շարունակ։ Ցերազում նրան հաջողվում եր գտնել իրական կյանքում ձախողած սիրո առարկային։ Այ անիրական տեսիլքով իրեն հայտնվող «ցնորք աղջկա» մասին և, վոր պոետն ասում և.

Ուրկից կը գա, չգիտեմ,
Ով և, ի՞նչ և, ո՞ւր կերթա.

---

*) Поэзия Армении, под редакции В. Брюсова, 1916, Москва.

Կուզեմ ընկնեմ յետևին,
Երթամ, ուր վոր նա կերթա։

Այդպես զգեղեցիկ ստիլ յետևից եյին ընկնում նույն ցավից տանջվող հարանման ապրումների յենթակա ռոմանտիկ Հայերն, սիմվոլիստ Տերյանը և դրական այդ ուղղություններին վերաբերող այլ պոետները։

Խրահակյանի 1890 և 1905 թ. հաջորդ ռեակցիայի շրջանի ստեղծագործություններում արտահայտություն և զտել հասարակական կյանքի հուսախաբությունը ևս։ Նրա նույն այդ ռեակցիայի որերում գրած բանաստեղծությունների մի վորոշ մասում արտահայտվում են պոետի ի դերև յելած ակնկալությունները այդ հեղափոխությունից, վորի անհաջող ընթացքի պատճառով բանաստեղծն իր հանրային հարազատ հատվածի հետ յերբեմն կորցրեց կյանքի ուղին և զատարձիր թռչունից նման անկյան ու անապատներն հածում եր անորոշ ուղիներում, յենթարկվելով հասարակական կյանքի վայրիվերումներին։

Իմ հոգին տարազիր՝ մի թռչուն՝
Մրբրկով զարնված թևաթափ.
Հողմերն են հեռ գլխիս շառաչում,
Ցեվ ուղիս անհատնում և անափ։

Հոգեբանական հար և նման վիճակ եր ապրում և Տերյանը.

Իմ հոգին ծովերում անծանոթ
Մենավոր ու մոլոր մի նավակ,
Մատնեցին փոթորկին աղմկոտ,
Հուսաբեկ թողած ղեկ ու թիակ...

Ինձ հեռվից լույս—վարոս չի կանչում
Չի ժպտում ինձ խաղաղ հանդրվան,
Միայն հողմն է տխուր շառաչում,
Անթափանց մեղ-մշուշ է միայն...

Խաչակյանի և Տերյանի հիշյալ բանաստեղծությունները ներկայացնում են մեր մանր բուրժուական մտավորականության մի մասի մտորումներն ու ապրումները, նրանց հոգեկան կացությունը: Նման որերը ծնել էին նման վհատ յերգեր: Խաչակյանն իր հարազատ հանրային հատվածի հետ կորցրել էր կյանքի ուղին, վոր էսև ու մութ էր և մոլոր», իսկ Տերյանը յուրայիններով հետ իրեն համարում էր «մի խենթ լուսնոտ», վոր «ուրվականորեն շրջում էր անվերջ»:

Ցելք չգտնելով դուրս գալու այդ կախարդական շրջանակից, մեր բանաստեղծները պոշտում և հոռետեսություն: Պոետի սրտից սկսում են յերևակվա նրա յերգերը թափվել «տրտում ու թալուկ»:

Թափվեցին տերևներն աշնան ծառերից՝
Թոշնած ու դալուկ,
Թափվեցին յերգերս բեկված իմ սրտից
Տրտում ու թալուկ:

Իր արտահայտած այս կարգի տրամադրություն-ներով Խահակյանը ներդաշնակվում էր գրական հը-բատարակում իշխող այն ժամանակվա յերգասաններ-բին, նրանց տանջող ցավը Խահակյանին ել էր պա-տել։

Նույն հասարակական կյանքի վայրենիքի որերին էր, որ Խահակյանը տեղահան յեղած՝ ուժ տվող իր հայրենի հողից ու ջրից՝ թափառում էր ոտաբոս ամա-յի ճամբերում, «կյանքի մրրկով զարնված թռչունի պես հոգնած ու ծյուրված»։ Թե իր անձնական ան-հատական, և թե հասարակական-քաղաքական կյանքի պատճառած լկանքներից խոնջացած՝ հոգնաբեկ բա-նաստեղծը «մենիկ անտառ»-ի, բնության խաղաղ գիրկն և ուզում քաշվել՝ առվի խոխոջով ուշքը կա-խարդելու «ինքնամոռացության չքնաղ յերազով...»

Հոգնած եմ, անտառ, հոգնած ուժասպառ,
Խորտակված սրտումս ել չի բրոնկվում...
Հոգիս թռցնող սերը բացավառ...
Ախ, մայրի անտառ, քո մենիկ գրկում
Քնել եմ ուզում— անհոգ ու անդորր։

Սա արդեն վոչ միայն Խահակյանի, այլև այդ շրջանի բոլոր հուսալքված, հոգնաբեկ պոետների բաղ-ձանքն էր. ներանձնանալ, մոռանալ ամեն ինչ և ա-մենքին։ Մինչև այդ նույնը չե՞ր թախանձում և Տեր-յանը, յերբ գրում էր.

Մի՛ անմայր մանուկ, հեկեկանքներից
Հոգնած ու քեկված— ննջել և ուզում,

Մի վերդովեք դուք, մի տանջեք նորից,
Մի տանջեք նորից— հանդչել ե ուզում...

Հոգեբանական նմանորինակ վիճակներ արտահայտելու համար Իսահակյանը գիտեր վերարտադրել բնությունն էլ պատկեր իւր և ի հանդուն։ Հոգմի բերանն ընկած արցունքի նման դողացող տերևների միջոցով բանաստեղծ Իսահակյանը տալիս և իր հոգեբանական հար և նման վիճակը.

Աշո՛ւն ե, քամի՛...
Տերևները մի-մի,
Արցունքի նման
Դողացին, ընկան...

Փչում ե, ասե՛ս,
Ունայնության պես,
Քամին ամեհի,
Ճամբում ամայի։

Սմքել ե հոգիս
Մռայլ գիշերիս,—
Զգիտեմ մահից,
Թե՞ կյանքի ահից...

Սկամայից հիշում ենք նման տրամադրության արտահայտող Տերյանի «Աշնան յերգը».

Ցրտահար, հոգմահար,
Դողացին մեղմաբար
Տերևները դեղին,
Պատեցին իմ ուղին։

կամ «Նարբից անձրև», «Շուշ ամպ» և այլ հղացումներով։

Խաչատրյանի այդ շրջանի ստեղծագործություններում իրականության վերաբերյալ տրամադրությունները հարաբերաբար հաստատուն չեն։ Տակավին իր լիրիկական բանաստեղծություններում Խաչատրյանն ունի «Աբու-Լա-Լա Մահարի» պոեմի մոտեցման սաղմերը՝ ուր ինչպես ճիշտ կերպով նկատել է Բրյուսովը, «առանձնապես պարզ, նկատվում է սիմվոլիստական շրջանի գրականության ազդեցությունը»*)։ Ցեղ խնդրես, «Աբու-Լա-Լա»-յի բնկերները կարծես լինեն այս և նման բանաստեղծությունները.

Ոտար. ամայի ճամբեքի վրա
Իմ կարավանը մեղմ կըդողանչի,
Կանգնիր, կարավան, ինձի կըթվա
Թե հայրենիքս ինձ մարդ կըկանչի։

Բայց լուռ և շուրջը ու շչուկ չը կա
Արևավառ, անդորր այս անապատում.
Ախ, հայրենիքըս, ինձ խորթ և հիմա,
Ու քնքուշ սիրտս ուրիշի գրկում։

Կնոջ համբույրին էլ չեմ հավատա,
Շուտ և մոռանում նա վառ արցունքներ,
Շարժվի՛ր, կարավան, ինձ ո՞վ է կանչում,—
Գիտցիր, լուռնի տակ չկա ուխտ և սեր։

---

*) Поэзия Армении, под ред. В. Брюсова, 1916 г. Москва.

Գընա՛, կարավանս, ինձ հետը քաշ տուր
Ոտար, ամայի ճամբեքի վրա,
Որտեղ կը հոգնիս գլուխս դիր վար
Ժեռ քարերի մեջ, փշերի վրա...

Այսպես փախս առած ուղտերի հետ անապատ գնալու, մենանալու գաղափարը, «Աբու-Լալա Մահարի»-ից առաջ արտահայտվել է Իսահակյանի «Ցերգեր ու վերքեր»-ի մեջ, որը նույնպես արդասիք էր հիշյալ դրական ուղղության ազդեցության:

***

Նույն այդ 1905 թ. հեղափոխության հաջորդող հասարակական կյանքի դեկադանսի տարիներին էր, յերբ կորցրած «Նորոգ հույսի կախարդ հորիզոններ»-ը, որ ասել է թե նաև ապրելու հակա տենչերը, բանաստեղծին սկսում է ավելի ըստեպ-ըստեպ այցելել մահվան մղձավանջը, այն՝ որոշ շրջանում սկսեց տիրաբար իշխել նրա գիտակցության մեջ: Այդ շրջանում էր գլխավորաբար, որ մահ ու մահերգ էր յերգում Իսահակյանը— «զերեզմանս անհայտ լինի, «Ցես որ մեռնեմ», յեվ այսպես շարունակ մահվան ահը իր սարսուռն էր հարաժամ զգալ տալիս նրան: Հիմնականում այսպես չէր պոետն իր գործունեության վաղ շրջանում, և դա հոգեբանորեն էլ հասկանալի յե. յերբ այդը նոր է բացվում, յերբ արևը գեղեցիկ է հանում, իսկապես ա՛վ է մտածում, թե որը մեռնելու յե: Ուրիշ խնդիր

և, թերը թարձրա յերեկոն և վրա հասնում։ Պետք և ասել, որ հետո, արդեն ներհուն դարձած պոետը փորձում և իրեն այցելող այս մահվան մթին հարցերը փիլիսոփայական սառնասրտությամբ քննել, այդ ամենը խորապես զգալու, հասկանալու, յերգելու համար։ Լինելով բանաստեղծ՝ (և ինչպիսի՛) Իսահակյանը փիլիսոփաների նման հասկացողություններով չի մտածում, այլ գեղարվեստական պատկերներով և արտահայտում հիշյալ հարցերին վերաբերող խորհրդածությունները։ Որինակ՝

Այն մթերը, թե մարդկային կյանքը հետաձգված, և այն ել շատ կարճ ժամանակով, վայրկյանի տևողությամբ, մահ և,— բանաստեղծն հետևյալ կերպ և արտահայտել իր «Ավելենայում» խորագիրը կրող գեղեցիկ բանաստեղծության մեջ.

Աբարատի ծեր կատարին
Դար և յեկել, վայրկյանի պես,
Ու անցել։

Անհուն թիվով կայծակների
Սուրն և բեկվել ադամանդին,
Ու անցել։

Մահախուճապ սեղուանների
Աչքն և դիպել լուս դաղաթին,
Ու անցել։

Հերթը հիմա քոնն և մի պահ,
Դու ել նայիր սեղ ճակատին,
Ու անցիր...

Աբաբաթի ծեր կատաղը հավերժության սիմվոլ է ընդունված այստեղ։ «Մահախուճապ սերունդները» յեկել ու անցել են աչքերը կպցնելով նրա լույս գագաթին։ Հերթը հասել է այժմ իրենց՝ պոետին, նա ևս իր հերթին «մի պահ» պիտի աչք կպցնի նրա սեղ ճակատին ու անցնի, վորովհետև մարդկային կյանքի տեվողությունն այդքան է։ Մահը, այդ ամենահզոր բանը, Իսահակյանի գրչի տակ բանաստեղծորեն պատկերվում է, վորպես,—

Անտես, անձայն,
Մի քարավան

Վորը

Գիշեր ու զոր
Կերթա՛, կերթա՛...
Վոզջ աշխարհքը
Կը տրորե,
Փոշի կանե,
Քամուն կուտա։
Ցեվ հավիտյան
Կերթա՛, կերթա՛...

Բայց միայն ապրող գոյությունները չեն, վոր մահկանացու են։ Աշխարհը՝ «ոգի այդ տունը, վորի հիմքը մահի վրա յե կառուցված», ինքն ել մահկանացու յե և վերջ ունի։ Նա ևս մշտապես մահվան քերանումն է։

Ցեվ մահը նրան
Ծամում է, ծամում։

Այսպես ուրեմն, յերկրի վրա ամեն, ամե՛ն ինչ մահկանացու յի ու վերջ ունի. ել ո՞ւր մնաց կյանքը, վոր են գլխից հեռաձգված մահ եր։ Բայց վոչինչ ինչ ել վոր լինի՝ կյանքն ամենի քաղցր և քան մահը, ուստի մահանալու, անհանալու զաղափարը, ինչպես յուրաքանչյուրի, այնպես ել բանաստեղծի հոգում զարթեցնում և հոգեբժանալու, անմահանալու սին ակնկալիք։

Հոգեբժանալու ձգտումներով համակված բանաստեղծը սկսում և մեջ բերել Զորդանոս Բրունոյի «Անմահություն, քո եյության մեջ և և իմ եյությունը» խոսքերը։

«Հաղթահարելու» համար անհանալու, մահանալու զաղափարը՝ բանաստեղծի միտքն սկսում և հածել այլ ուղղությամբ։ Նա դուրս և գալիս մահկանացուության կնքված կախարդական շրջանակից բնության մեջ ձուլվելու, կոսմոսի մասնիկը դառնալու յեղանակով։ Բնության հետ ապրելու, միաձուլվելու կարողությունը կենսախինդ և դարձնում պոետին և վանել և ապրիս նրանից մահվան միտք զաղափարը։ Պոետը հոգեբանորեն արդեն այն համոզման և գալիս, վոր ինքը տիեզերքի անբաժան մասնիկն և, վոր տիեզերքը մեծ լցվում և իրենով, իսկ տիեզերքի մասը լինել՝ նշանակում և անմահ լինել.

Ծոմն և արտիս մեջ ծփում յերազով,
Զգում եմ յես ինձ առվի, ժայռի՛ հետ.
Տիեզերքը մեծ՝ լցվում և ինձնով,
Մեկ եմ զգում ինձ յերկրի, յերկնի հետ։

Անհուն հիացքով սիրտըս և զարկում,
Խորին ցնծությամբ վողջունում եմ յես,
Ցեվ որհնելով եմ և գրկախառնվում
Մեծ և անսահման բնությանն հավի՛րժ։

Իսահակյանի մասնաբաններն արդեն մեծացել են, «հոգու ջահերով արեղակվել են նրա մտածումները»։ Բանաստեղծը զտնում է մարդուն և բնությունը կապող թելերը՝ «այս աշխարհի իրերից» փախչելով անդրաշխարհի «բյուրեղ բարձունքները»։ Իրեն տիեզերքի պերճ հյուսվածքը համարող պոետը միանալով բնության հետ՝ փիլիսոփայորեն «հերքում» և իր մահկանացու լինելու դառը ճշմարտությունը (վոր ուրիշ անգամ ել հերքեց հավերժացող սիրո զգացմամբ)։

Նրա սիրտն այժմ վորպես թե կրծքի անձուկ վանդակում չի շրջափակված, յերեկվա վերքոտ սիրտը դարձել է յերկինք։

— Սիրտս յերկինք է...
Ամեն արարած
Ասող ունի այնտեղ—
Խորշ ունի այնտեղ։

Մենք արդեն տեսանք, վոր պոետը փորձում ել փիլիսոփայորեն «հերքել» իր մահկանացու լինելը, «փախչելով այս աշխարհի իրերից» անդր աշխարհները։ Սակայն յերբ Իսահակյանի հորդացող խոհերը տեղատվություն են կատարում, յերբ անցնում ն

հուզումների շրջանը, բանաստեղծը նորից նոր իրեն զգում և Պրոմեթեոսի նման պիրկ շղթաներով գամված այս աշխարհի սլացիկ ծերպերին։ Այդ ժամանակ է, որ նա իրեն հարց է տալիս.

Ո՞ւր է փախչում հոգիս անհուն
Այս աշխարհի իրերից.
Ցավ իրերի անդր աշխարհում
Ի՞նչ է պտրում, տենչում նա։
Միայն յետ է՝ հասկանում ինձ
Ցավ յետ էլ ինձ չհասկացա։

Լայն է առում բանաստեղծը։ Հանախ վոչ միայն մենք, այլ և ինքն էլ իրեն չի հասկանում, յերբ բռնվում է «յերկնքի ցավով», յերբ ձեռք է դարկում վերացական անհաս բաներին։

Մենք արդեն տեսանք, վոր Իսահակյանի միտքը փիլիսոփայորեն խորհրդածելու հակումներ է ցուցաբերել, և դլխավորապես իր գործունեության այն շրջանում, յերբ պետք տարբեր էր առել և դարձել ներհուն։ Այդ փիլիսոփայությունը բանաստեղծի առաջ բարդամայա կյանքի կենսափորձից բղխող՝ յետ կասելի՝ նատուրալ փիլիսոփայության արդասիք չէ, վորպիսին համեմատաբար ավելի վորոշ նկատելի յե Թումանյանի ստեղծագործություններում։ Գիտական իմաստով փիլիսոփայական տարբեր սիստեմներին լավ ծանոթ լինելու հանգամանքը ևս զգալապես նկատելի յե Իսահակյանի ստեղծագործություններում, մի բան, վոր Թումանյանի միայն քառյակներում զգացվեց։

Ցեմբ Խաչատրյանի, ինչպես և Թումանյանի մոտ այդ մոտիվները շարունակեցին իրենց արտակարգ նորությամբ, ապա գերազանցապես որիգինալ, խիստ բանաստեղծական պատկերների միջոցով արտահայտվեցին:

Մինչև հիմա մենք քննության առանք Խաչատրյանի ստեղծագործությունների այն բաժինը, որը ռեֆլեկտիվ և անվանել Բրյուսովը, և ուր նկատելի էին սիմվոլիստական գրականության շարժումները: Մեզ մնաց վերլուծման ենթարկել մեր պոետի ստեղծագործությունների նաև այն մասը, որն առանձնապես գունավորել և նրա պոեզիան՝ վերջում յերգերին թարմություն ու կենդանություն ներարկելով: Ցեռ խոսում եմ Խաչատրյանի ժողովրդական ստեղծագործության վրայով գրված լիրիքական բանաստեղծությունների մասին:

Իր ստեղծագործությունների այս ամենալավ, ամենաառողջ մասով Խաչատրյանն ընդհուպ մոտենում է Ֆոլկլորի անապական ակունքներին: Մոտենալ ժողովրդական բանահյուսությանը՝ նշանակում էր մոտենալ գրական ռեալիզմին, որովհետև ժողովրդի ստեղծագործությունը, նրա արվեստը ռեալիզմ է: Պուշկինի մասին խոսելիս Խաչատրյանը մի տեղ ճիշտ կերպով նկատում է, որ ժողովրդական ստեղծագործությանն ընդհուպ մոտենալու շնորհիվ էր, որ նա (Պուշկինը, Հ. Ղ.) գրական դեկն ուղղեց ռոմանտ-

ուրիշ փոքրիկների մեջով դեպի ճշմարիտ, իրական արվեստը»*): Խառհակյանն ինքն էլ այդ կերպ վարվելով մասամբ մոռնում էր անալիզին: Իր ուսուցիչ Հովհաննես Հովհաննիսյանի ու դրշակից Թումանյանի նման՝ Խառհակյանն ուժեղ, սուրբ և մեծ ազդեցություն է կրել տասնին հեքիաթներ, ապա՝ այլ ժողովուրդների բանավոր ստեղծագործություններից: Այդ բանը չի ուրանում և ինքը Խառհակյանը: Ցուրբ Վիսարիոնը դրած իր նամակում այդ առթիվ նա հետևյալն է ասում. «Ինձ վրա ամենից ավելի ազդեցություն են թողել հայ ժողովրդական յերգերը, ապա և այլ ժողովուրդներինը, հատկապես արևելյան, ինչպես և մարդասիրական յերգերը»**):

Այդ ստեղծագործությունների հետ ունեցած անբուկելի կապի շնորհիվ և, վարպետ Խառհակյանն ամբողջապես չվերցնելուց 1890 և հետագա տարիներում դրական հրապարակում իշխող սիմվոլիզմը: Ժողովրդի հոգին էր, վարպետ նատած լինելով պոետի մեջ՝ վերկիսա ի չարին դարձավ նրա համար: Խառհակյանը յերբեք չի նվաստացրել իր ժողովրդական ստեղծագործության վարպետ դրված յերգերում, յերբ հայրենի ուժավոր ստեղծագործ հոգի վրա յի իջեն զրում, յերբ ժողովրդի անընկճելի կամքն և իր մեջ լեռնացած տենդում: Այլ անդամներ հասարակական կյանքի վայրիվերումներին յենթակա «տարաբերի թռչուն» դարձած պոետը չեր կարող այսպիսի տողեր չգրել.

---

*) «Գրական թերթ» 1937 թ. № 5

**) Ю. Веселовский «Русское влияние в современной Армянской Литературе» Москва 1909. стр. 25.

Կենսական ծովի հույզերի մեջին
Ցեռ ժայռի նման կանգնած եմ ամուր։
Կայծակն է զարկում իմ վեռ ճակատին,
Ցեռ ժայռի նման կանգնած եմ ամուր։

Հողմ ու փոթորիկ շուրջս են հածում։
Ցեռ ժայռի նման կանգնած եմ ամուր։
Գոռ ալիքները կուրծքս են ծեծում,
Ցեռ ժայռի նման կանգնած եմ ամուր։

Ինձնից բռնեցեք, խորտակված մարդիկ,
Ցեռ ժայռի նման կանգնած եմ ամուր։
Ձեր խարխափները վոտքիս տակ ձգեք,
Ցեռ ժայռի նման կանգնած եմ ամուր։*)

Կրկնում ենք՝ այսպես կարող էր գրել ժողովրդի անխորտակ հավաքական ուժն իր մեջ զգացող և ժողովրդի ակնադրյուրից ուժ առնող բանաստեղծը։

Մենք լսում յերգաշատ Շիրակում՝ Իսահակյանը գեռ մանկուց լսել և սովորել և պռետ ժողովրդի հայրենի աղբյուրի վճիռ յերգերը, վոր կախարդում, համակում էր նրա ուշքն ու հոգին։ Մենք դիտմամբ չենք ասում Իսահակյանի՝ ժողովրդի ծնունդ լինելու հանգամանքը, վորովհետև, ինչպես ինքն է ասում, «ժողովրդի հանճարը ծնվում է ժողովրդի թանձրու-

*) Այս բանաստեղծությունը գրված է 1895 թ. և տակավին անտիպ է, մեջբերումն անում ենք պռետի թուլլատվությամբ։

Ո՞Ր ԿԱՐ ԻՄ ԱՆՑԵԼ
ԼԱՎԵՐ, ՀԱՎԱՏԱՑԱՆ.
Ո՞Ր ՏԱՆԻՄ ԵՂԱՎ.
ԻՄ ՍԻՐՏԻՆ Է ՀԱՆԴՉԱՆՈՒ...

ԱՂԲՅՈՒՐԸ՝ ՅԱՐԽԵՏԱՆԻ
ՀԱՏԱԿԱՆ ՍԻՐԵՐԱՆ.
ԵՎ ՏԱԿԸ ԶԳԱՆԻ
ԶԺԱՆԱՑԻ Է, ԶԺԱՆԱՑ...

ԼԱՎԵՐ Է ԱՂԲՅՈՒՐԸ
ԻՄ ԱՓՈՒՐ ԳՈՂԱՆ.—
ԴԱՆԱՅԻՆ ԱՂԲՅՈՒՐԻՆ
ԹՈՒՔՆԻ ԻՄ ԻՆ ԱՐԳԱՆ...

Ա. ԻՍԱՀԱԿՅԱՆ:

թյան ճնշումից, ինչպես աղամանդը քարածուխի ճնշումից։ Եվ այդ աղամանդը, նկատում է պոետը, ժողովրդի զգացմունքների, նրա տենչերի, յերազների, նրա տառապանքների, նրա զայրույթների և կամքի խտացումն է և կոնկրետացումը։ Նրա մեջ արտացոլվում են ժողովրդի աշխարհաբմբռնումը, նրա կենսագործումը։ Հանճարը ժողովրդի վարդ դրսևորումն է, նրա համար ու թաղուն գիտակցության հայտարերումը,— նրա ինքնագիտակցությունը, նրա իմաստուն խոսքը*)։ Ժողովրդի ծոցից գուրս յեկած և նրա բանաստեղծական բերանը հանդիսացող Խաչատուրյանը գիտե վերջինիս կարիքն ու հոգը, նրա խինդն ու խանդը։

Ինչպես յուրաքանչյուր մեծ բանաստեղծ, այնպես էլ Խաչատուրյանը ժողովրդական ստեղծագործության մշակման, զարգացման խնդրում ունի յուրահատուկ մեթոդ, վորով նա տարբերվում է դիցուք Թումանյանից, կամ մեկ ուրիշից։ Այսպես որինակ՝ յերբ Թումանյանն էր ժողովրդական ստեղծագործությունը մշակում, ապա մեծ մասամբ առնում էր պատրաստի սյուժեն, և այդ կանվայի վրա ստեղծագործում իրենը։ Նա զտում էր իր վերցրած բուն ժողովրդական յերգի կամ հեքիաթի բոլոր այն մասերը, վոր ավելորդ էր համարում, և պահում էր այն՝ ինչ անմեռ էր ու դեղեցիկ, դնելով նրա վրա իր տաղանդի ու աշխարհայացքի կնիքը։ Այսպես մշակելով էր, վոր նա Վարդան Այգեկցուց առած ժողովրդական «Մի

*) «Գրական թերթ» 1936 թ. № 5

կաթիլ մեղրը» դարձնում և մի ծով մեղր։ Վոչ մի-
այն այդ, այլ և նրա «Քաջ Նազարը», «Գուլթանի
լեզուն», և շատ ուրիշ բուն ժողովրդական հղացում-
ներ պատմի կախարդական դրչին յենթարկվելով, ե՛լ
ավելի գեղեցիկ ու զորավիգ դարձեր եյին դառնում։
Շատ քիչ ենք պատահում, վոր Թումանյանն իր ժո-
ղովրդական վոգի ունեցող ստեղծագործություններին
սյուժեն ևս ինքն ստեղծեր։ Այսպես չեր ոգտագործ-
ում Գալիլոյը Ամենիք Իսահակյանը։ Նրա ժողովուրդ-
կան ստեղծագործության վոգով գրվածների ճըն-
շող մեծամասնության ամբողջական պատրաստի կան-
վան առնված չի ժողովրդականից, միայն հազվադեպ
պարագաներում, և սյուժե ունեցող ժողովրդական
ստեղծագործությունները մշակելիս եր, վոր Իսա-
հակյանը ևս Թումանյանի նման պատրաստի կանվան
առնում եր բուն ժողովրդական բնագրից։ Մնացած
պարագաներում, մանավանդ իր այնպիսի վոտանա-
վորները գրելիս, ինչպես «Մանկալ ես բեղարած ես»,
կամ «Զմեռն անցավ յեկավ գարուն», «Հազել ես
կարմիր», «Ոխտը սարով հեռու քեզնեն», և ժողո-
վրդական յերգերի վոգով գրված այլ յերգերում,
ոգտագործված են մեր ժողովրդական յերգերի առան-
ձին վոնները, դարձվածքները, ամենաշատը առանձին
քառյակներ միայն, իսկ ամբողջական հղացումը հեղի-
նակն ինքն է ստեղծագործում և այն էլ այնպես,
վոր մարդ հանախ դժվար է տարբերում դա բուն
ժողովրդական յերգից։ Ի միջի այլոց նշենք, վոր
Թումանյանին հակառակ՝ Իսահակյանը ժողովրդա-
կան ստեղծագործությունը, նրա բառ ու բանը ոգ-

տագործում է վորպես միջոց իր սեփական ապրումներն ու զգացումները արտահայտելու համար (մի հանգամանք, վոր նույնպես ուրվագծում է նրա գրական դիմանկարը) ·բայց վորովհետև իր մեջ պոետը խտացրել է ժողովրդի հոգեբանությունը, նրա բնորոշ գծերը, ուստի իրեն յերգելով հանդերձ՝ Ի-սահակյանը այդ յերգերում միաժամանակ ժողովրդին է ցուցաբերել՝ հարազատ մնալով նրան:

Մոսք չի կարող լինել այն մասին, վոր ինչպես Հովհաննիսյանի, Աղայանի Թումանյանի, այնպես էլ Իսահակյանի խնդրո առարկա մշակումները ու ժողովրդական յերգերի վրդով գրվածները մեծ մասամբ գեղարվեստորեն ավելի ամբողջական ու կողմերիկ գործեր են դուրս գալիս, քան բուն իսկ ժողովրդական ստեղծագործությունները։ Ինքնին հասկանալի յե, վոր յեթե ժողովրդական ստեղծագործությունը գեղարվեստորեն ավելի բարձր և անթերի լիներ, քան դրա վերամշակումները, այն ժամանակ ումն եյին պետք բուն ժողովրդական ստեղծագործությունից սակավարժեք այդպիսի յերկրորդված «մշակումները»։

Իսահակյանի ժողովրդական ստեղծագործությունների վրդով գրված յերգերում՝ է շարս մի քանի այլ մոտիվների (սիրո, աշխատանքի և այլն) տեղ են գտել նաև պանդխտության հետ կապված կարոտի յերգեր։

Սոցիալական այդ չարիքը, վորպիսին է պանդխտությունը, տարաբդությունը, նոր յերևույթ

չեն մեղանում։ Այն արձագանք է գտել մեր տակավին 13–14–րդ դարերի մի շարք հայրեններում։

Անցյալ դարի 80–ական թվականներից պանդխտությունը հակայական չափերի յն հասնում մեր իրականության մեջ, վորի հետևանքով թե մեր ժողովրդական յերգերում, թե գրականության մեջ ծայր են առնում պանդխտության հետ կապված յերգերը։

Նույն այդ թվականներին եր, վոր Անդրկովկասի հասարակական–քաղաքական կյանքում գործոն դեր սկսեցին խաղալ դեռ 70–ական թվականներից յերևացող արդյունաբերական կապիտալիզմի «առաջին ծաղիկները»։ Քաղաքներում, այստեղ ու այնտեղ սկսեցին լավել գործարանների շչակների ձայները։ Ցերկաթուղին ցանցել սկսեց այնպիսի առևտրաարդյունաբերական կենտրոնները ինչպիսիք եյին՝ Թբիլիսին, Բաքուն, Յերևանը։ Արդյունաբերական կապիտալիզմի հաղթարշավն եր այդ, վոր սկսում եր մի կողմից բնության դեղեցկությունները յեղծել իր ապականյալ շնչով, մյուս կողմից քայքայել գյուղական նահապետական բարք ու սովքը։ Դրա հետևանքով գյուղերում, քաղաքներում սկսվում եր ծայր առնել աղքատությունն ու պանդխտությունը։ Յեվ հիրավի՝ քայքայման, պանդխտության, աղքատացման այդ պրոցեսները շատ արագությամբ եյին կատարվում 80–90–ական թվականներին Անդրկովկասի և մասնավորապես Հայաստանի գյուղերում։ Գյուղացին իր «թեզաշատ» անջրդի և անբերրի հողից ստացած փոքրիկ հասույթի մեծ բաժինը տալիս եր «ամպի պես գոռացող» պարտատերերին և ինքը մնում ձեռնունայն,

կամ ինչպես Իսահակյանն է ասում՝ «Մերկ ի մորենի», այն աստիճան, վոր յերբեմն «թոնիրը դցելին շորահոտ չեր գա»։ Ի՞նչ եր մնում անել վերահաս սովից խուսափելու համար։ Թողնել հայրենի գյուղն ու իր «թզաչափ հողը», դրա հետ միասին սիրած յարին և այն ամեն նվիրական ու թանկ բաները, ինչ նա ուներ, և «բռունավեր թռչունի» նման աչքերը հառել «ոխտը սարով հեռուն» գոր չ քաղաքների կապարե հորիզոններին։ Եվ ահա իր ոջախից ու սրբատով սիրածից ցավով պոկվելով, պանդուխտի ցուլը ձեռնառած գյուղացին իր վիճակն է վողբում, կարոտի հուզիչ յերգը շրթունքին։

Պանդուխտությունն ավելի մեծ չափերի սկսեց հասնել 90–900-ական թվականներին, յերբ հանդես եր յելել Իսահակյանը։ Բնականաբար այդ պատմաշրջանի յերգիչը ավելի քան իր ավագ դրշակիցները (Հովհաննիսյան, Թումանյան) ցավով պիտի յերգեր իր վաթանի, իր ոջախի, իր սիրուհու կորուստը վողբացող գյուղացու վիճակը և նրա «յերգերը» իր անձնական «վերքերը» պիտի համարեր։

Այդ յերգերում Իսահակյանի անհատական, «սրբտային» տարրը շատ ուժեղ է յերևան յելել։ Զե՞ վոր հարանման ապրումները ծանոթ են յեղել «ոխտը սարով», «ոխտը տարով» յարից ու հայրենիքից բաժան բանաստեղծին։ Այդ է պատճառը, վոր պոետին հաջողվել է ամենախոր կերպով վերարտադրել պանդրխտության մեջ գտնվող գյուղացու հոգեկան ապրումները, նրա կարոտի բովանդակ զգացումը.

Որքա՜ն սարով հեռու քեզնից,
Քո չքվաքով ապրում եմ, յար.
Որքա՜ն սարով բաժան քեզնից
Քո կարոտով եկվում եմ, յար։

Մենակ պանդխտով գյուղացին չէ, վոր ժեռնում իր իր յարին տեսնելու անձկությունից։ Նույն վիճակն և ապրում և տանը նստած գեղատի սիրահար գեղջկուհին։ Սա ևս իր յարի կարոտն աչքերի մեջ պահած ունի և նույնպիսի անձկությամբ սպասում և էթարբիկ մեջ սառնալ իր պանդխտից, սակայն նրա սպասումներն ի դերև են ելնում, անցնում և ցուրտ ձմեռը, բացվում են ճանապարհները ու դարձյալ խաբար չի գալիս անձկալիից.

Ձմեռն անցավ, յեկավ գարուն,
Հալավ բարձրիկ տարերու ձյուն,
Ճամբա բացվավ դարիքներուն.
Աչքս ճամբին՝ դաղար չկա։

Ինչ և ժնում այս բոլորից հետո իր դարիք դուրբաթի դարձը տենչացող գեղջկուհուն, յեթե վոչ արցունքի հեղեղներ բաց թողնել աչքերից.

Ջուրն և պրծել՝ կուգա սարեն,
Սարեն, ձորեն... իմ աչքերեն...
Մի նորոդիր սրտիս յարեն,

Դարձիր վաթան, հողն անուշ է,
Հողն անուշ է, ջուրն անուշ է։*)

Բանաստեղծ Իսահակյանն այստեղ վաթանի, հողի անուշությանն զաղափարն է դնում, վոր առկա յե նաև բուն ժողովրդական յերգում։ Այո՛, վաթանի հողն անուշ է, բայց սակավ է, «թզաչափ» է, անջրդի յե ու չի լինում նրանով ապրել, յերբ այդ հողի հասույթից իր բաժինն է ուզում նաև անաշխատ ռեսը։ Այդու հանդերձ, համեմատաբար ավելի «բախտավոր» վիճակի մեջ է դեռևս հայրենի հողից չըկտրված, կորդ յերկիրը վարող արևակեզ ճակատից ծովի պես քրտինք թափող մանկալի և նրա յարի դրությունը։ Ասում ենք բախտավոր, վորովհետև մայր յերկրում նա տակավին ծխացող ոջախ ունի (վոր կյանքի սիմվոլ է համարում ժողովուրդը) և իր կողքին կանգնած առանին աշխատանքների ընկեր, հոգատար ու սիրող մի կին։ Այդ կինն է, վոր իր ջանքերով մանկալին

---

*) Իսահակյանի այս յերգի և ժողովրդական քառյակի համեմատությունից, վոր բերում ենք այստեղ, կարելի յե իմանալ, թե ինչպես եր մշակում Իսահակյանը ժող. յերգերը։

Ջուրը պրծել, կուգա սարին,
Կուգա, թափի մարմար քարին.
Չի սաղցուցեր սրտին յարին,—
Ցարն ա դարձել իր իրդարին։

բանթոլ և առաջարկում որվա հոգնատանջ աշխատան-
քից։

Մանկալ ես, բեղարած ես,
Առը շուռ տուր, շուտ արի։
Ծովի պես քրտնած ես,
Ցեղնեքն արձկի տուն արի։

Կաթի սիրը քաշել եմ,
Դրել եմ հովին՝ սառի,
Ալ զոզնոցս կապել եմ,
Արի թառլան թը՛ռ արի։

Դադրած բեղարած յար ջան,
Ամպերն յելան դե արի՝
Բեղարած ջանիդ զուրբան
Ծոից թև առ—թեզ արի։

***

Խաչատուրյանի ժողովրդական ստեղծագործությունների վրայով գրված վոստանավորներում տեղ են գտել նաև հայ գյուղացու չքավորական կյանքին վերաբերվող մի շարք բանաստեղծություններ։ Այս կարգի ժողովրդական մոտիվներում Խաչատուրյանը յերևան է հանել գյուղացու կյանքի լավատեսությունը։ Բանաստեղծը, ինչ խոսք, կարողանում է գեղարվեստական խոսքի միջոցով կենդանացրել, նկարել ամբողջական տեսարաններ ու մանրամասներ։ Խաչատուրյանի

ժողովրդական մոտիվներում տեղ են գտել նաև որն ի բուն դատող հայ գեղջուկի քեֆ ու ուրախության յերգերը տոն օրերին (Տես «Ընկ-ը-տպ-ը» սեղ. վրաց և այլ բանաստեղծությունները)։

«Ավետիք Իսահակյանը ժողովրդական յերգերի վոգով գրված իր յերգերում այն ստիպեցնում է մոռացել ժողովրդական լիրիկայի հորինվածքին, մըտայնությանն ու զգայակերպին, վոր նրա այդ կարգի բանաստեղծությունները թվում են զանազան յերգիչների ստեղծածները՝ նոր ժողովրդական յերգերի սերիայով»*)։

Եվ հիրավի մեր ձեռքի տակ վկաստեր կան Իսահակյանի ժողովրդական յերգերի վոգով գրվածների մասին. այդ յերգերն այնքան է ժողովուրդը յուրացրել, վոր յերբ շիրակցի գյուղացուն, հարցրել են, թե ո՞վ է հորինել նրա ծոր տված յերգը, նա փոխանակ յերգի իսկական հեղինակ Իսահակյանին մատնանշելու, ինքնագոհ ասել է. մե՛րն է (ժողովուրդինը), իսկ յերբ Իսահակյանի անունն են տվել՝ շիրակցու «հավատալը չի յեկել»։ Դա, ինչպես Բրյուսովն է ասում, «Ամենաբարձր պարգևն է, վորի մասին յերազել միայն կարող է պոետը»։ Բրյուսովից առաջ Բելինսկին ել նույն այդ բանն է համարել գրողի ամենամեծ վարձատրությունը։ Կոյլցովի մասին խոսե-

*) Վ. Բրյուսովի խոսքերն են։

լիս՝ մի այլ կապակցությամբ նա ասել է. «Եվ կգա ժամանակ, երբ Կոյլցովի յերգերը կանցնեն ժողովրդի մեջ և կերգվեն բովանդակ Ռուսաստանի անտահման տարածության վրա, ինչպես կմտնեն ժողովրդի մեջ և անգիր կարվեն Կռիլովի առակները»*): Բելինսկին իհարկե չսխալվեց իր գուշակությունների մեջ. Կոյլցովի յերգերն ու Կռիլովի առակները հեղինակների մահից հետո տարածվեցին բովանդակ Ռուսաստանում և դարձան ժողովրդի սեփականություն: Իսահակյանն այդ վտանգին արժանացավ տակավին տարիներ առաջ: Այն, ինչ հետամուտ գալիք եր լինելու ռուս գրողների համար կենդանության որոք, Իսահակյանի համար շողշողում եր ինչպես վաղորդյանը:

Այդ բոլորից հետո հոգ չե, թե մեր քննադատների մեջ գտնվել են մարդիկ, որոնք Իսահակյանի հիշյալ յերգերի մասին գրել են, թե. «Հայ ժողովրդական քառյակների հետ համեմատելով միանգամայն կեղծ են, նա շատը և հանգը և՛ ընդունում է, և՛ չի ընդունում»**):

Այս տողերի հեղինակն է վոչ անհայտ հայ գրաքննադատ Մամբրե Մատենճյանը, որը մեր քննադատական գրականության պատմության մեջ հայտնի յե իբրև խիստ միտումնավոր քննադատ: Նա իր

---

*) Сочинения В. Г. Белинского. т. IV, с. 420. 1901 г.

**) «Հորիզոն» 1913 թ. № 55 Մ. Մատենճյանի յերկերի ողջերից:

ժամանակ խստագույնս պատժել է և՛ Վահան Տերյանին, և՛ Շիրվանզադեին, առաջինին համարելով՝ Գոլ Վերլենին յերկրորդող ազգատականությունից դուրս մի բանաստեղծ, իսկ յերկրորդին ել հայտարարելով Սունդուկյանին ընդօրինակող։

***

Այն հարցին, թե ոտեղծագործների վո՞ր տիպին և պատկանում Իսահակյանը, մի շնչով գրողների, թե՞ ջնջելով գրողների, ապա նկատի ունենալով նրա բանաստեղծությունների տարբեր հրատարակությունները՝ կարող ենք ասել, վոր Իսահակյանը յերկրորդ տիպի գրողներին և պատկանում։ Այս խնդրում մեր բանաստեղծն իր յերբեմնի ուսուցիչ Հովհաննիսյանի հակապատկերը լինելով, նմանվում և գերշակից Թումանյանին։ Հայտնի յե, վոր Հովհաննիսյանը իր բանաստեղծությունները մեկ անգամ լույս ընծայելուց հետո այլևս շատ քիչ եր մշակում։ Յեթե վորոշ վոտանավորներ գաղափարապես կամ կատարման տրվեստով չեյին գոհացնում Հովհաննիսյանին, ապա նա այդպիսի վոտանավորները ավելի շուտ վոչ թե վերախմբագրում ու վերամշակում եր, այլ առանց այլևայլի դուրս եր թողնում իր կազմած նոր ժողովածուից։ Այդպես չեյին վարվում իրենց նույնիսկ տպագրված գործերի հետ Թումանյանը, Տերյանը և Իսահակյանը, վորը Թումանյանի նման իր գործերը մշակում եր թե՛ լեզվական, վոճական և

թե՛ բովանդակության տեսակետից։ Մի քանի բանաստեղծություններ հազիվ ունենա Իսահակյանը, վորոնց գեղեցկությունը խախտված չլինի, իսկ մնացածները շարունակական ճշգման յենթարկվելով՝ ազատագրվում եյին ավելորդություններից և մեծ մասամբ դառնում կուռ ու կոփ հղացումներ։ Այսպես որինակ՝ 1903 թվին հրատարակված բանաստեղծությունների ժողովածուի մեջ տեղ դրած այս քառատողը, ինչպես և ամբողջ հղացումը գեղարվեստորեն բարձր ճշգման և յենթարկված Իսահակյանի 1908 թվի բանաստեղծությունների նոր ժողովածուի մեջ միայն։ Բերենք մի նմուշ.

Ալագյազը թագը գլխին.
Ամպերու մեջ նստել է,
Հանց թագավոր մարմար գահին՝
Սարերը՝ վեր բազմել է։

(1903 թ. հրատ.)

Ալագյազը աստղերու մեջ,
Ադամանդե թագը գլխին.
Սարերեն վեր, ամպերեն վեր,
Թիկին և ոսկի զրմբուխտ գահին։

(1908 թ. հրատ.)

Մի այլ բանաստեղծություն («Ճեղարշ ամպեր յերկինք առանց») յերեք վարիանտ ունի։ Ցերբ այդ բանաստեղծության առաջին հրատարակությունը հա-

մեմատում ենք յերկրորդ և յերրորդ հրատարակութիւնների հետ, պարզ տեսնում ենք, թե ինչքան մը-տածված ու խնամքով և մշակում պոետն իր գործերը։ Հաճախ բանաստեղծն այնպիսի նրբութիւնների յեռև և ընկնում, վոր կարծես թե «ավելորդութիւն» է։ Այսպես որինակ՝ իր հիշյալ վոտանավորը տարբեր անգամներ հրատարակելիս բանաստեղծին յերկար ժամանակ զբաղեցրել է այսպիսի մի «չնչին» բան՝ ի՞նչպես և լավ ասել «նուրբ յեղեգը կը դողա», թե «յեղեգը նուրբ կը դողա»։ Տպագիր վոտանավորների վրա այսքան աշխատանք կատարող պոետի լաբորատորիան մեզ հայտնի յե, իսկ թե ձեռագրերը ինչքան են մշակվել, անդամահատվել այդ արդեն ինքը դիտեր «Շելլերը— ասում է Գյոթեն,— իր պոեմի 22 տունը գարձրել է 7 և ստեղծագործութիւնը վոչնչով չտուժեց այդ սարսափելի վիրահատումից, ընդհակառակն, այդ 7 տներում գարմանալի կերպով լավ պահպանվեցին 22 տան մաքերը»։*)

Այսպիսի «անդամահատման» հաջող վախճանն ինքնին վկայում է հեղինակի ձիրքը։ Ինչը ջնջելու և ինչը թողնելու այդ դժվարին գործին ծանոթ է և Իսահակյանը։

***

Իր ապրումներն ուրիշին հաղորդել կարենալու կարևոր գործոններից է լեզուն։ Այդ զենքը միշտ

---

*) «Разговоры Гете» Собранные Эккерманом, С.-Петербург, 1891 г. стр. 289.

հատու յն պահում իր ձևերում պոետը։ Իսահակյանի լեզուն փարթամորեն հարուստ լեզու յն, վոնը ինքնատիպ։ Վոնը, վոր հեղինակի, ոմյալ գնալիս Իսահակյանի, գեղարվեստական դիմանկարի արտահայտությունն և, դրալապես կրում և պոետի անհատապաշտական աշխարհայացողության կնիքը։ Այսպես արինակ՝ Իսահակյանի «յուրաքանչյուր նախադասություն,— ճիշտ կերպով նկատում ե ընկ. Հակոբ Հարությունյանը,— ունի իր ուրույն անհատականությունը և ձգտում ե մենակ ապրելու։ Այնպես վոր կարելի յն վորոշ նախադասություններ դուրս բերել վորպես ապորիզմ։ Ամեն մի նախադասություն կազմում ե մի կենդանի բջիջ, մի մոնադ, վոր կարող ե ինքնուրույն կյանք ունենալ, առանձին ինքնամփոփ և ինքնարավ ամբողջականություն ներկայացնելով։ Թեև այդ նախադասությունը ամբողջ յերկի մի մոմենտը, մի յերանգը, մի գիծն և պատկերացնում, սակայն այնպես հատու, շեշտված ձևով, վոր կարող և դիտվել իբրև ուրույն, ներքուստ ավարտված մի գեղարվեստական միավոր... Իսահակյանի վերաբերմունքը գեպի բառերը նույնն և ինչ գեպի նախադասությունը։ Նրա բառերը, թե՛ իրենց իմաստային պատկերացումների բովանդակությամբ և թե՛ իրենց հնչակազմով ունեն յուրահատուկ տպավորություն, ուրույն՝ առանձնապես շեշտված ազդեցություն։ Նրա բառերն ել պայթում են անմիջական հուզական և գունեղ զգայական լիցքից»։

Լեզվական և վոճական այդ հատկությունների հետ մեկտեղ պետք ե շեշտել Իսահակյանի բանաստեղծական լեզվի նվագայնությունը ևս։ Իսահակյա-

նը աշխատել է համապատասխան հնչյունների կրկնությամբ վերարտադրել նկարագրվող իրերի բնաձայնը (տես «Լուռ պարտեզում սրտատրոփ սիրատենչ» բանաստեղծությունը և ուրիշները)։

Իսահակյանի հղացումների այս յերաժշտականությունը, ներդաշնակությունը զյուքել է հայ լավագույն կոմպոզիտորներին և մղել ձայնագրելու նրա բանաստեղծությունները։ Իսահակյանի այնպիսի վոտանավորները, ինչպիսիք են «Ճամփաղ կուտաս», «Հովերն առան», «Մաճկալ ես բեղարած ես», «Գիշերը ելավ», «Սև մութ ամպեր», «Ա՛խ մեր սիրտը», և շատ ուրիշները ձայնագրել են հայ կոմպոզիտորները և յերգվել ու յերգվում են ամենուրեք...

Իսահակյանի արտահայտչական զենքերից մեկն էլ պատկերավորությունն է։ Նրա ստեղծած պատկերները մաշվելու չափ գործածված չեն, դրանք պոետի սեփական մտքի ծնունդ են, նրա բանաստեղծական զգաս ու զարմանք յերազներից պոկված վառ յերևակայության արդյունք։ Իսահակյանն այստեղ էլ պատրաստին չի փնտրում, լավ իմանալով, վոր դափնիները դժվարության չափով գին ունեն։

Յերբ բանաստեղծը փորձում է համեմատությունների դիմել, միշտ հաշվի յե առնում ավյալ յերևույթի կամ առարկայի բնորոշ (նրա կոչումը, տարերքը կազմող) հատկանիշը։ Յերկու իրար բաղխվող ուժերի հզորությունը ցույց տալու համար, Իսահակյանը ուրիշ բանաստեղծների նման, յերբեք չի համե-

մասի դա «յերկու շարժուն սարի հետ»։ Ճիշտ է սարի պատկերը թեև արտահայտում է վիթխարի, ծառացած ուժի գաղափար, սակայն նրա կոչումը «վաղեր» կամ «շարժուն» լինելը չի, այլ հավերժորեն անշարժ վիճակում մնալն է։ Ստորև բերված «Հոտը ու հովիվը» բանաստեղծության մեջ մենք կը տեսնենք սարի, ժայռի իսկական դերը։ Արագածի յանջերին թափառող սիրուց լքված մի պատանի թախանձել է աղբյուրներին ու ժայռերին, «որ լինեին իրեն ընկեր անմեկին»։ Ահա թե ինչ են պատասխանել իրենց կոչումը դրսևորող աղբյուրներն ու ժայռերը.

Աղբյուրները հառաչելով ասացին.
«Գնացող ենք, ի՞նչպես մնանք մենք քեզ հետ».
Եվ ժայռերը հառաչելով ասացին՝
«Մնացող ենք, ինչպես գնանք մենք քեզ հետ»։*)

Վոչ սարերն են այստեղ «շարժուն», և վոչ էլ աղբյուրներն են «անշարժ»։

Խաղակյանի ուժը իր պատկերների թանձրության մեջ էլ է։ Պոետը հաճախ սոսկ մի պատկերով ամբողջական գաղափար է արտահայտում։ Գարնան գալը արտահայտելու համար նրան հարկավոր չեն շատ խոսքեր շռայլել.

Ե՛յ կանաչ աղբեր, դու բարով յեկար,
Դու բարով յեկար, իմ կանաչ աղբեր։

---

*) Տե՛ս «Խորհրդային գրականություն», եջ 98, 1938 թ. № 6

Սակայն իսկ տողն արդեն լիովին հնարավորություն է տալիս մեզ հասկանալու, թե ով է «կանաչ աղբերը»։ Երկրորդ տողը, որ առաջինի շրջված ձևն է, կրկնություն է և նպատակ ունի միայն ուժեղացնել առաջին տողի նույն միտքը։ Մեկ ուրիշ բանաստեղծ, յերևի վոչ միայն մի տողի, այլ և մի քառյակի ու մի ամբողջ յերգի մեջ չկարողանար զարնան դալն այսպես վորոշակի կերպով արտահայտել, ինչպես այդ մի պատկերով «կանաչ աղբեր»-ով հաջողվել է տալ Իսահակյանին։ Իր տիեզերական զանգը» բանաստեղծության մեջ Իսահակյանի վառ յերևակայությունն այսպիսի գրանդիոզ ու իր տեսակում բացառիկ պատկեր է ստեղծել։ Տիեզերքը նրա մոտ պատկերվել է վորպես հսկայական մի զանգ, իսկ պոետի հոգին նրա վանդ լեզվակը, վոր զարնվելով տիեզերական զանգի պատերին իր քաղցրալուր զողանջները է տարածելու մեղատ աշխարհի վրա, այդ զողանջները իր իսկ պոետի յերգերն են։ Պատկերներ են սրանք, վոր դրոշմվում են մարդու հիշողության մեջ և այլևս չեն մոռացվում։

Իսահակյանի պոեզիայի պատկերավորության մասին շատ կարելի յե խոսել, բայց բավականանանք և մի նմուշ բերելով, վորը վերստին ու վերստին ապացուցում է, վոր Իսահակյանը վոչ միայն յերաժիշտ է, այլ և մեծ նկարիչ։ Եվ իսկապես ի՞նչ է սա, յե՞րգ, թե նկար, գրչի՞, թե վրձինի գործ.

Եղարշ ամպեր յերկինքն առան,
Լուսնյակին անդորր կշողա,
Լռիկ ճահճում՝ հարհանգ-մարմանդ,
Նուրբ յեղեգը կը դողա։

Արարիչը՝ մենակ ու լուռ,
Ցեղերին մոտ կը քայլե—
Կը մտորե՝ խոր ու տխուր,
Ճահիճն ապուտ կը փայլե։

Այս բոլորից հետո ասել, թե «Ամենքը Իսահակյանը բնության պատկերներ շատ քիչ ունի, նա չի նկարում, այլ նկարելիս էլ յերգում է»*) նշանակում է կարճատես լինել, չտեսնել այն իրոք ճոխ ու շռայլ պատկերները, որ սփռած ունի Իսահակյանն իր յուրաքանչյուր յերգ ու տողի մեջ։ Կամենք և այն, որ պետք պատկերավոր մտածողության մեջ յերևման և դալիս նրա ժողովրդի նման մտածելու մտայնությունը.

Արևն հասավ սարի գլխուն,
Դար ու դաշտում լույս չկա,
Հավք ու թռչուն մտան խոր քուն,
Ախ, ինձ համար քուն չկա։

Լուսնյակն ընկավ յերդիկից ներս,
Կշեռքն յելավ յերկնքում,
Զով հովերն էլ մթնշողես
Ամպերի հետ են դրուցում։

Կամ՝

Ցորեկն յեկավ, վոչխարն յեկավ
Ադիզ բալես քընած մնաց։

---

*) «Մուրճ», 1904 թ. № 3, եջ 148.

Քաղաքային մարդու հոգեբանություն ունեցող պոետը այսպես չի կարող մտածել։ Ցերյանի պատկերավորության մեջ այսպիսի բան չեք գտնի։ Իսահակյան, Թումանյան, Հովհաննիսյան և այլ ժողովրդի նման մտածող պոետներն են, որ գիտեն այսպես արտահայտել վրա հասնող գիշերվա պատկերը։

Բանաստեղծական խոսքը զորեղ ու տպավորիչ դարձնելու համար լավ հանդեր կազմելու ձգտումից, յերաժշտականությունից ու պատկերավորությունից բացի՝ Իսահակյանին ուրիշ միջոցներ ել են հայտնի։ Այդ միջոցներից մեկն և կրկնությունը, որ ժող. յերգերին ու աշուղական խաղերին ե հատուկ։ Լավ ծանոթ լինելով վերջիններիս պոետիկային՝ Իսահակյանն ինքն ել, նպատակով կարողանում ե նույնպիսի կրկնություններ դիմել, որոնք վոչ թե տաղտուկ են առաջացնում, այլ ավելի զորեղ ու տպավորիչ են դարձնում գեղարվեստական խոսքը։ Բերենք մի որինակ.

Սրտի մեջն ե կյանքը մարդուս,
Սիրտը որ կոտրավ կյանքն ինչ պետք ե.
Սերս մարավ, աստղը սրտիս,
Աստղը մարավ, սիրտըս ինչ պետք ե։
Աղիզ մի սիրտ սերըս կուղեր
Փուճ. աշխարհը անկամորթ ե։

Կրկնությունը, ինչպես տեսնում ենք, վոտանավորը թուլացնելու, ապավորությունը վանել տալու տեղ ավելի յե արում մեր ուշադրությունը, վորովհետև յուրաքանչյուր անգամ կրկնվող բառը նոր իմաստ, նոր միտք և հաղորդում ընթերցողին։ Իր գեղարվեստական խոսքը դիպուկ ու ապավորիչ դարձնելու համար, Իսահակյանը դիմում է նաև զուգադրության (պարալելիզմի) և հակադրության սկզբունքների կիրառմանը, վոր նույնպես ժող. յերգերի պոետիկային և հատուկ։ Իսահակյանն այս սկզբունքներն ոգտագործում է իր ժող. յերգերի վոգով գրած տաղերում։ Վո՞րն է զուգահեռականության սկզբունքը։ Բանաստեղծը բնության յերևույթներից վերցրած վորևե պատկեր նկարագրելով, իր յերգի առաջին մասում, յերկրորդ մասում այդ պատկերին զուգադրում է իր հոգեկան վիճակը։ Յերգի հիմնական իմաստը յերկրորդ յերկտողումն է, իսկ առաջինը համեմատության որյեկան է։ Բերենք ժող. յերգի մի որինակ.

Գարուն ա, ձյուն ա արել,
Իմ յարը ինձնից ա սառել։

Ավելի քան պարզ է բնության այս յերևույթների հարաբերությունը պոետի հոգեկան հար և նման վիճակի հետ։ Առաջին տողը տալիս է բնության, յես կասեյի, մի արտառոց պատկեր։ Գարունը, վոր սովորաբար իր ջերմությամբ ծլեցնում է հունդը հողում ու ծաղկում է ամեն ինչ, բնության այդ կենդանության ու զարթոնքի ժամանակ հանկարծ ձյուն

և գալիս, և մեռնում ամեն ինչ։ Բնության այս անընդհատելի, հանկարծակիորեն, դաժան ծաղրը միանգամայն համապատասխանում է պոետի ներքին աշխարհում կատարված նման անընդհատելի յերևույթին։ Յերգի սրտում, ուր նույնպես գարուն եր, սեր եր ծլել ու պետք է փթթեր, մինչդեռ հանկարծ նույնպես անընդհատելի կերպով նրա յարը սառչում և իրենից։ Ինչ խոսք, վոր պոետի հոգու վրա էլ ճերմակին է նստում, ինչպես այն ձյունը կանաչ դաշտի վրա։ Այս զուգահեռականության սկզբունքով են ստեղծագործված Իսահակյանի մի շարք յերգերը.

Թափվեցին տերևներն աշնան ծառերի՝
Թոշնած ու դալուկ։
Թափվեցին յերգերս բեկված իմ սրտից
Սրտում ու թալուկ։

Ինչպես վոր ուշ աշունքին բնության մահացման հետ չորացած ծառերից թափվում են դալուկ թոշնած տերևները, այնպես էլ բանաստեղծի բեկված սրտից թափվում են սրտում ու թալուկ յերգերը։

Այստեղ էլ վոտանավորի եյական մասը, բուն իմաստը յերկրորդ տողն է, իսկ առաջին տողը յերկրորդի լրացումն է, նրա համեմատությունը։ Այստեղ է կազմվում, ինչպես ասինք, զուգահեռի սկզբունքը, իսկ հակադրության՝ դեպքում բնությունից մի պատկեր է առնում հեղինակը և ապա՝ հակադրում նրան մի ուրիշը, վոր պոետի հոգեկան վիճակից է բղխում և միանգամայն համապատասխան է նրա ներքինին.

Արտուտն անուշ յերգում է սեր,
Սիրտս լուռ է քանց ձմեռ.
Եա ինչ կարմիր վառ արև է,
Սիրտս մութն է քանց գիշեր...

Ժողովրդական յերգերի պոետիկայից, ինչպես ասինք, Խաչակյանն ոգևորում էր այն ժամանակ, երբ դրա վրայն համապատասխան յերգեր էր գրում։ Այլ բանաստեղծություններում, ուր քաղաքային հոգեբանություն ունեցող մարդու բարդ ապրումները պետք է դրսևորել, պոետն ինքարկե խուսափում էր զուտեղ պատկերներից, չէր ոգտագործում ժողովրդական առանձին վոճեր, այլ մոտենում էր յերանգների մեջ տարբերություն մացնող Տերյանի յեղանակներին, ռոմանտիկների, սիմվոլիստների արտահայտչական յեղանակներին։ Մինչ բանիկ Խաչակյանը դիտե, վոր ամեն յերգ իր բառերով է յերգվում։ Նա վոչ միայն այդ, նա դիտե նաև, վոր ամեն յերգ իր յեղանակն ու նվագի հատուկ գործիքն ունի։ Նրա բանաստեղծը (հազվադեպ պարագաներում) միստիկական արամադրություններ է արտահայտում, ձեռք է զարկում յերգահոնին։ Սիմվոլիստական, ռոմանտիկական մոտիվներ հնչեցնելիս ձեռք է առնում բացող թավ ջութակը և այսպես յերգում.

Լորինների տակ
Մտորում եմ լուռ.,
Հեռուն մի ջութակ
Հեծում է տխուր։

Ժող. յերգի վոգով գրված խաղերն ասելիս, «դաստարգուն աշուղիչ» նման բանաստեղծը սաղ-քյամանչա, կամ սրինդ ևր ձեռքը առնում ու ծոր տալիս «վարդ Շիրազի բայաթին»:

Ասում են անթերի, ասումվածային հեղինակներ չկան, և դա ճիշտ է: Շեքսպիրի ստեղծագործություններում անգամ թերություններ են նշում նրա լավագույն մեկնաբանողները: Մեր Իսահակյանն էլ, մանավանդ իր գործունեության վաղ շրջանում, ստեղծագործել է նաև թույլ գործեր, հիշենք որինակ «Ընկերիս», «Բայց յես վոգի յեմ» և այս կարգի այլ յերգեր: Սակայն նման բանաստեղծությունների թիվը իհարկե շատ է ինվազ. ուստի դրանք վորևե կերպ չեն կարող ստվեր գցել պոետի անզուգական բանաստեղծությունների վրա:

Իսահակյանի ստեղծագործությունների գեղագիտական կողմի, ինչպես և արտահայտչական միջոցների (պատկեր, լեզու, գունագեղեցկություն և այլն) քննության հետ. մեկտեղ ուշադրության արժանի յե մեր պոետի ստեղծագործությունների տաղաչափությունը ևս: Թե ինչքան մեծ նշանակություն ունեն բանաստեղծական ստեղծագործության մեջ չափը, ռիթմը և նման «ձևական» հանգամանքները, այդ մասին հետևյալն է ասում Գյոթեն.

«Պոետական տարբեր ձևերից խորհրդավոր կեր-

պով կախված են ահագին ապավորություններ։ Եթե իմ հռոմեական յեղերկրությունները վերադարձավորեն բայրոնյան Դոն Ժուանջ-ի յափով և տոնով, ապա դայթակղեցնող ապավորություն կստացվի դրանցից*)։

Եվթե յեղերությունը չափի փոփոխման հետևանքով կարող է դայթակղեցուցիչ ապավորություն թողնել մարդու վրա, Բայրոնի Դոն Ժուանջ-ի նման, ապա հասկանալի յե թե ինչքան և էյերկրորդականաձև ասածը։ Գյոթեյի այս խոսքերը վկայում են, որ բանաստեղծության ձևից, չափից շատ բան է կախված, որ յուրաքանչյուր կոնկրետ բովանդակություն դրսևորման համապատասխան ձև է պահանջում։

Մենք պիտի փորձենք ցույց տալ, որ Իսահակյանին մեծ մասամբ հաջողվում է այդ։ Նա ներդաշնակություն է փորձել և հաջողվել է գտնել այդ ներդաշնակությունը։ Պետք է ասած, որ Իսահակյանը, ինչպես և մեր այլ ականավոր վարպետ բանաստեղծները, հաշվի եյին առնում և մեր լեզվի ընձեռնած հնարավորությունները, ըստ այժմ և քնարերգում իրենց հույները։ Պրոֆեսոր դոկտոր Մանուկ Աբեղյանն այդ առթիվ նկատում է հետևյալը՝ «Նա (խոսքն Իսահակյանի մասին է Հ. Ղ.) ինչպես և ուրիշները, չի փորձում քորեական վոտանավորներ գրել։ Սեվ հասկանալի յե, թե ինչու։ Քորեական ոիթմ առաջ բերելու համար՝ պետք է տողի մեջ

---

*) «Разговоры Гете», собранные Эккёрмано, С. Петербург, 1891 стр. 91.

ռիթմական վոտքի մեծ կազմվածք լինի մեծասար (քորեոս կամ սրոքեոս) կոչված բառական վոտքից, բայց մեր լեզվի մեջ այդպիսի բառերի կամ բառական վոտքերի թիվը շատ սահմանափակ է*)։

Նկատենք և այն, վոր Իսահակյանը չի հորինում նաև դակտիլական և քորեոբոբ վոտքերով վոտանավորներ նույնպես վերոհիշյալ պատճառով՝ (մենք մի քանի յեռավանկ բառեր ունենք միայն, վորոնց շեշտը առաջին վանկի վրա յե, չունենք նաև յեռավանկ բառեր, վոր յերկու շեշտ ունենան)։

Պատահական չե ուրեմն այն, վոր Իսահակյանն իր բանաստեղծությունները մեծ մասամբ ստեղծագործել և ստեղծագործում է մեր լեզվի ընձեռնած չափերով։ Մի յերկու նմուշ բերենք Իսահակյանի հանճարակի գործածած չափերից և տեսնենք, թե համապատասխանո՞ւմ է նրա այդ չափերով հորինված հրաշագործությունները տվյալ բանաստեղծության ներքին թելադրանքին։ Նախ յամբական վոտանավորների չափով հորինվածներից, վորով հարուստ և մեր լեզուն.

Բալե՛ս / ունի / հընդո՛ւ / մաթա՛,
Վասկի՛ / որո՛ցք, / ասլա՛ս / ծածկո՛ծք,
Պուպո՛ւշ / զարդաբ, / նըշխուն / բալա,
Պաճիկ / կենես... / որ որ, լալա։

Զորատոնյա յամբական ուժը վանկանի պարզ ու աշխուժ հղացման այս չափը միանգամայն համապատասխան է վոտանավորի ներքին բովանդակությա-

---

*) Պրոֆ. դոկտոր Մ. Աբեղյան՝ Հայոց լեզվի տարրական քերականություն, եջ՝ 291։

նը։ Նույն չափով պոետը չեր կարող հորինել իր «Կյանքս դալար ու լալագար» վոտանավորը, վորովհետև այդպիսի բանաստեղծություններ նախ պատմողական բնույթ ունի, վորի համար հարկավոր է շարահյուսական մեծ միություն և ապա այստեղ պոետն իր անցած-դնացած «զուտ դարուն»-ներն է վերցրել, վորին համապատասխան և ինքներն յամբական քառանդամ տասնվեց վանկանի վոտանավորի պանդուխ չափը (այս սխեմայով 4+4+4+4=16), վորով և պոետը գրել է իր այս հղացումը։

Կյանքս դալար /ու լալագար/ /վոսկի որերս/
ո՞ւր դնացին
Իմ դարունքվա, /զուտ դարունքվա/ /վառ ծաղիկներս/ ո՞ւր դնացին։

Պետք է ասել, վոր Իսահակյանից առաջ մեր նոր դրականության մեջ մենակ Պատկանյանն է այս չափով վոտանավոր հորինել։ Իսահակյանից հետո, այդ չափը գործածեցին Ֆերյանը, և ուրիշներ. սակայն շատ ասելս 16 վանկանի յամբական վոտանավորը, վորոշ միությունակություն և առաջ բերում, ուստի համեմատաբար մեծ հղացումների համար ճանճրություն կարող է պատճառել։ Այդ հանգամանքը նկատի ունենալով է, յերևի, վոր Իսահակյանն իր նուշեպես եպիկական տարբ պարունակող «Դարդը սրտիս» վոտանավորի համար ընտրել է վոչ թե 16 վանկանի յամբական վոտանավորի հիշյալ չափը, այլ մի վանկով պակաս 15 վանկանի քառանդամ մեկ անապեստով վոտանավորի տեսակը։ Այս չափը առաջինի համեմատու-

թյամբ, վոր նկատի յե ունեցել Իսահակյանը, այն առավելությունն ունի, վոր տողավերջում փոխում է չափը, վոր ասել է, թե ցրում է միորինակությունը.

Դարդը՝ սրտիս, /աղքատ ու խեղճ/ /ցուպը ձեռիս՝/
գլխակոր.
Եա՛ տարիներ /պանդուխտ յեղած/ /Ինորեն դարձա!/
հայրենիք։

Իսահակյանի գործածած բանաստեղծական չափերից է և յոթ վանկանի մի անապեստով ու յերկու մբռով վոտանավորի այս տեսակը (սխեմա 3+4=3+4)։

Ես ճամբեն / ոլոր / մոլոր
Սև ծովի / բոլոր / կերթա,
Շուշան յարս / ինձ թողեր է,
Ես տղի հետ / ո՞ւր կերթա։

Այս կտրտված կարճ չափը նույնպես հարմար է դալիս կեռմաններով ընթացող վոլոր-մոլոր ճանապարհի հետ։

Իսահակյանի գործածած բանաստեղծական չափերից է և անապեստյան յեռոտնյա ինը վանկանի վոտանավորի տեսակը (այս սխեմայով 3+3+3=9)։

Իմ հոգի՛ն / տարաղի՛ր / մի թռչուն՝
Մբրբկո՛վ / զարնված/, թևաթա՛փ,
Հաղմերն ե՛ն / հեգ գբլխի՛ս / շառաչո՛ւմ,
Ցեվ ուղի՛ս /անհատնո՛ւմ / և անա՛փ։

Սրանք են դլխավորաբար այն չափերը, որ հանախակի գործածում է Խաչատրյանը, իր յերգերը, հավելվածությունները, ձոնելները և քնարական այլ տեսակի վոտանավորները գրելիս։

Դարձյալ Խաչատրյանի հանդ կազմելու արվեստին, (որքից մեծապես կախված է վոտանավորի ռիթմիկ լինելու հանգամանքը), պետք է ասել, որ նրա բանաստեղծությունների մի մասը կազմված է աղքատ ու միտրիական հանգերից։ Այսպես արիական՝ թագուհի—գուլի, հուլն—գայլուն, վիրուղ—վոսկեհուլս, կախաղան—անձայն, կախաղան—ունայն մաս—սատանայ, լավանալ—կա, քաղի—քամի, մահճում—վառվում և այլն։

Ցերբենն էլ մեր պոետը հանդ է կազմում նույն բառի կրկնությամբ, մի հանգամանք, որ ինչպես ճիշտ կերպով նկատում է պրոֆ. Մ. Աբեղյանը. «Վոչ մի հրատարակ ու դրամչություն չի տալ վոտանավորներին»։

Բայց յերբ նույն բառի կրկնությամբ հանդ կազմելը միտրիական է դարձնում հղացումը, ապա Խաչատրյանը յերբեմն էլ այլ պրիոմի յե դիմում, վորով շատ գրեթե դառնում հանդը։ Դա այն պրիոմն է, յերբ անկախ տողամերջին հանդից՝ վոտանավորի տողամիջին ու տողասկզբին էլ հանդ է կազմվում։ Որինակ՝

Դարդերս լացե՛ք, սարի սըմբուլ
Այվան-այվան ծաղիկներ,
Դարդերս լացե՛ք, քաղի բլբո՛ւլ,
Ամպոշող յերկնուց գով-հովեր...

Իսահակյանն ունի և այնպիսի բանաստեղծություններ, ուր տողամիջին բառն և հանդակից գտնում տողավերջին բառի հետ. այսպես որինակ՝

Ցեռ սիրում եմ մրմունջ— տրրտունջ
Տանջված սրտի յերդ ու վերք:

Ինչպես մեր մի շարք այլ բանաստեղծներ (Հովհաննիսյան, Թումանյան), այնպես ել Իսահակյանը՝ տողի մեջ վանկերի թիվը հավասար քանակությամբ պահպանելու համար թույլ և տալիս անբնական արդումներ . սղումներ, վորոնք, ինչպես ասում են, աչքի համար են միայն, վորովհետև այսորինակ սրդված բառերը չեն կարդացվում վորպես մի վանկանի բառեր, վշտի, հնդու, ասդ, և այլն: (պիտի լինի վըշտի, հընդու և այլն: Իր մի շարք բանաստեղծությունները վերահրատարակելիս Իսահակյանը վերականգնել է այդ սղումները, սակայն վոչ միշտ և վոչ բոլոր դեպքերում, իսկ յերբեմն ել թույլ է տվել նոր, անբնական սղումներ:

Մեզ կարող են ասել, թե միորինակ հանգերով, անբնական սղումներով գրված Իսահակյանի վորոշ բանաստեղծություններն անգամ չեն դադարում զրեղ տպավորություն գործելուց: Այդ իհարկե այդպես և, բայց նման տպավորություն թողնելու պատճառը արդեն պոետի բանաստեղծական լեզվի դգայական կողմի ուժեղությունն, ու հնարագիտությունն է, իսկ յերբ այդ ել հերիք չի անում՝ այն ժամանակ բանաստեղծը դիմում է սրտի խորքից յեկող այս կարգի ձայնար-

կումներբ ու բացականչություններբ. «Հե՛յ վա՛խ ու վախ», «ա՛խ իմ սերբը, վա՛խ իմ սերբը», «ա՛խ իմ ճամբեներ» և այսպես շարունակ։

Վերջացնենք։ Մեա՛ շորս ասանյակ տարբերեր տեսել իր գրական արդասավոր գործունեության ընթացքում, Խտահակյանն անցավ գրական զժվարին մի ճանապարհ, որբ ընթացքում խուսափեց դյուրածին յերգերից և խիստական լիրիքական բանաստեղծության անկրնչելի նմուշներ ստեղծ մեր գրականությանը։ Խտահակյանի արեւի արբատան բոցով գրված ժողովրդական վոգի ունեցող լիապես կյանքատ այդ «ՀՁՄբուխտյա յերգերում»*), յերեան և յեկել մեր ժողովուրդն իր տոհմիկ յերգերով, իր հայրենի հողով ու ջրով, իր բանաստեղծական վառ յերեւակայությամբ։ Այդ յերգերում տեսնում ենք հայ աշխատավոր գյուղացուն՝ ջանքեզար մանկալին իր վար ու ցանքով, փոցխ ու դուրանով, գեղջկական պարզ նիստ ու կացով, աղ ու հացով, սիրտ, թախծի ու խնդության մանիներով։ Այդ յերգերում և, որ արտահայտվել և պանդուխտ գյուղացու կարոտը գեպի իր վաթանն ու հայրենական ծխացող ոջախը, որբի գյուրանքը այնքան մեծ և յեղել

*) Իր 1922 թ. Վենիտիկում հրատարակած «Լեռնան ծաղիկներ» խորագրբը կրող գրքույկի մեջ տեղ գտած յերգերի բաժիններից մեկը պոետը վերնագրել է «ՀՁՄբուխտյա յերգեր»։

հաստատակամորեն իր վերադարձի յերգը վոգով Խաչատրյանի համար.

Մայր իմ ժողովուրդ, դեպի քեզ կըգամ,
Կըգամ դեպի քեզ, հայրենի աշխարհ,
Ինչ վոր վեհ ունիմ, սիրով ձեզ կտամ
Ցեվ սիրաս, կյանքս միայն ձեզ համար։

Առնելով իր յերևակայական ուղտերի քարավանն դանտուն դերվիշը*) վերադարձավ յուր բաղձալի հայրենի աշխարհը՝ ընդմիշտ թողնելով «Ցիդրիսի նոճիածածկ» ափերը. Ինչպե՞ս կարող եր Խաչատրյանը չվերադառնալ այն սիրասուն հայրենիքը, վորը գլուտարարքատ ու սիրազեղ կոչով դեպի իրեն եր կանչում իր նշանավոր գուսանին։

Խաչատրյանը սիրով ընդունեց այդ հրավերը և դրեց իր հռչակավոր «Պատասխան հայրենիքի կոչին» բանաստեղծությունը. այդ անո՛ւշ, ա՛յդ վոլորուն յերգը հնչում եր այսպես.

Պիտի փարվիմ չքնաղ լանջիդ՝
Գաբնան վարդով ցնծուն.
Ցեվ մայրական անհուն շնչիդ՝
Ցորեն արտով ծփուն։

Կանչում ես ինձ լուսարարքատ
Քո սիրազեղ կոչով,

*) Խաչատրյանին եվիրված իր մի բանաստեղծության մեջ Տերյանը նրան անվանել է «դանտուն դերվիշ»։

Գնում քեզ եմ տեսնում նոր ու պայծառ
Քո հրնագեղ լոռեով։

Լաոռ ու հզոր քո ապագան
Գայթակղում է իմ դեմ.
Դու, հավերժող իմ Հայաստան,
Մնում քաղցր ու վսեմ։

Գլխ. խմբագիր՝ Հ. Գաբոնյան
Տեխ. խմբագիր՝ Ս. Ալբուրյան
Սրբագրիչ՝ Բ. Ղուկասյան

Գլավլիտի լիազոր՝ Ջ—1048
Հրատ. № 5058. Պատվեր 785.
Տիրաժ 3000. Մեկ մամ. 35000 նիշ.
Հանձնված է արտադրության 10 հոկտեմբերի 1939 թ. Ստորագրված է տպագրության 1 հունվարի 1940 թ.

Հայպետհրատի I տպարան, Երևան, Լենինի, 65

9

[404]

A I/6501